


1822
518 4



ՏԱՋԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՋԱՐԳՆԵՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ



ԶՈՐԵՔԱԲԹԻ, 5 ՅՈՒՆՈՒԱՐ 1911



ԹԻՒ 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց Հայրիկն իր յախճենական հանգիստին մէջ	Հարմար Բահանայ
Փրկչին Ենունդը (Խորհրդածութիւններ	Բարգէն Նպիսկ.
«Փառք ի բարձունս» (խորհած)	Լուսնբազ
Իզմիրեան՝ պատմագէտ	Հրանտ Վ. Յովսէփեան
Եզրակացութիւն (Հայ Առաքելական Ս. Եկեղեցի եւ Աղծա- մար ու Սիս գրիին)	ՄԱՏԹԷՈՍ ԵՊ. ԻԶՄԻՐԼԵԱՆ
Յուշեր՝ հոգեւոյս Հայրապետին Ա. Պատրիարքու- քեան օրերէն	Արշակ Ալպոյանեան
Դնուած ժամանակը գիտակցօրէն ապրուած կեանքն է	Թորգոմ Նպա. Սեբաստիոյ
Ենունդեան առթիւ	Նդիշէ Արքիեպ. Դուրեան
Արդարութեան ծնունդը	Սուրէն Վ. Գալէմեան
Նոր Տաշոյ առթիւ	Պաակ Վ. Խորէնեան
Կաղանդի գիշերը	Յիմի
Ազգային կեանքը	Խմբագրութիւն

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐԶՈՒՄԱՆ,
Զարմաքճըլար, Յակոբեան խան

Յոյսով ու վստահութեամբ լեցուն թեւակոխելու առթիւ Տաճարի երկրորդ տարելը շնորհակալութիւն մէջ, հարկ կը դրանք յայտարարելու թէ թերթը առ այժմ պիտի շարունակէ հրատարակուիլ նոյն ծաւալով (16 երես), հոգածու գտնուելով աւելի՛ խնամք տանելու պարունակութեան, որոշ նպատակով եւ ուղղութեամբ, որու համաձայն գրանուած յօդուածներ միայն պիտի կրնան հրատարակուիլ: Բաժնեգինը նոյն կը մնայ գաւառի և արտասահմանի համար, իսկ Պոլսոյ տարեկան բաժնեգինին վրայ հինգ դշի յաւելում մը միայն կ'ըլլայ, հաշուոց դիւրութեան համար, և այն նկատուածով մանաւանդ որ Պոլսոյ բաժանորդաց մեծ մասին թերթն ալ թօղ-թօղով կը դրկուի: Հետեւապէս,

«Տաճար»ի տարեկան (52 թիւի համար) բաժանորդագրութեան պայմաններն են՝

Պոլսոյ և գաւառաց	40 դր.
Արտասահման	10 ֆր.
Ռուսիա	4 ռուպլի
Ամերիկա	2 տօլար

Այս պայմանները նոյն են՝ եկեղեցական թէ աշխարհական ընթերցողներու համար հաւասարապէս:

Տաճարի նիւթականը տակաւին ի վիճակի չէ մասնաւոր զեղչ մը ընելու կարօտ եկեղեցականներու և որբանոցներու կամ վարժարաններու համար: Հետեւապէս կը հրաւիրենք բարեսէրները՝ այժմէն փութացնելու տարեկան Տաճարի նուիրատուութիւնները, Բ. շրջանի սկզբնաւորութենէն իսկ կատարելու համար առաքումները:

Ծանուցումներ կ'ընդունուին՝ չափաւոր և զիւրամատչելի պայմաններով:

* *

Այն բոլոր բաժանորդներն և գործակալները որոնք դեռ Ա. տարելը շնորհակալութիւնները փակած չեն մեզի հետ, կը խնդրուի որ շուտով կարգադրեն զայն: Բ. տարելը շնորհակալութեան և տարւոյն սկիզբէն վճարումը հարկեցուցիչ է, նիւթական դրութեւնութեանց չմասնելու և աւելորդ թրջութեանց չհարկադրելու համար թերթին խմբագրութիւնը:

ՅԱՌԱՋԻԿԱՅ ԹԻՒՈՎ

Նիւթերու առատութեան պատճառով յառաջիկայ թիւին հարկադրուեցանք թողուլ, չարունակութիւնը ԲԻՐՈՅ. Յ. ՃԷՃԻՉԵԱՆ ԷՖ.Ի խմատալից յօդուածին:

ԱՐԱՐԻՉԸ՝ ՏԻԵՋԵՐՔԻՆ ՄԷՉ

Նաեւ հմուտ բանասէր-գրագէտ Յ. Գ. Մրմրեան ԷՖ.Էնչահագրդիւ և հիւթեղ գրութիւն մը:

ՀՈԳԵԼՈՅՍ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՎՐԱՅ

ՎՐԻՊԱԿ. — Տաճարի ներկայ թիւին 16րդ էջին երկրորդ սիւնակի Բ. պարբերութեան վերջին մասը պէտք է ուղղել հետեւեալ կերպով. —

«Ահ, ո՛րչափ աւելի կենդանի է ճառագայթի մը շինած հաւատքը, քան մազադաթի մը շինածը: Առաջինն իր առկայծումին մէջ անգամ չմարիր, ու կրնայ զոյգին շնորհիւ նորէն դառնալ իր ուրախաբար լոյսին» ևն:

ՏԱՋԱՐ

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱՔԻ, 5 ՅՈՒՆՈՒԱՐ 1911

ԹԻԻ 1—2



ՀՈԳԵԼՈՅՍ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՀԱՅՈՑ
ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ Տ. Տ. ՄԱՏԹԵՈՍ Բ. Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ
(1845—1910)



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿՆ

ԻՐ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՏԻՆ ՄԷՋ

Հովիւ Բաջ զանձն յնէ ի վերայ ոչխարաց:

ԱԻԵՏԱՐԱՆ

Հայրապետ սուրբ եւ անբիծ:

ՇԱՐԱԿԱՆ

Հայոց Հայրիկն ոչ եւս է:

Նոր ժամանակներու հայ կեանքին մէջ անձնութեան մեծագոյն հերոսը, մարմնաւորեալ Բողոքը արիւնարբու բռնապետութեան դէմ, անբասիր կրօնաւորը, ճշմարիտ տիպար եկեղեցականը, Ան որուն կեանքը՝ սահմանափակուած ամենախիստ օրինապահութեան մէջ՝ հզօր օրինակ մը եղած է դիտակից ուսումնածպաշտութեան և անկեղծ ազգասիրութեան, կնքեց իր կեանքը Էջմիածնի մէջ, գտնելով հանգիստ մը՝ արդարապէս շահուած՝ աշխարհային հոգերէ, վիշտերէ, տառապանքներէ, կսկիծներէ, որոնք այնքան աւելի մեծ եղան իրեն համար, որքան տարածուն, ահաւոր, կսկիծեցուցիչ, խորունկ էր — Էր... աւա՛ղ, է միշտ — վիշտն ու տառապանքը Հայուն, ու որքան զգայուն, ու փափուկ և անձնուէր էր սիրտն այդ Մեծ Մարդուն, որ Հայուն ցաւերովը կը դալարուէր, ու կը կոտորար իր ազգակիցներու ծովածաւալ գրգռախտութիւններովը:

Հայրապետ մը չէր ան որ մեռաւ — բառին սովորական դարձած անձուկ իմաստովը, — ոչ ալ պարզ գահակալ մը Էջմիածնի նուիրական Աթուին. ճշմարիտ Հայր մըն էր, Հայրն էր ան հայ ժողովուրդին:

Հայոց Հայրիկն է որ կ'անհետանայ:

Տիաղոս մը որուն նոյնքան ար-

ժանի հանդիսացած է անհետացող մեծ գէմբը՝ Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ. Ս.ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ, որքան իր անմիշտական նախորդը՝ հոգեւոյս Խրիմեան Հայրիկ, երկուքն ալ ազգին սիրովը բաբախուն սիրտի տէր ազնիւ հոգիներ, երկուքն ալ մեծ աքսորականներ, երկուքն ալ հաւասարապէս բարձր — թէեւ իրարմէ տարբեր — տաղանդի և արժանիքի տէր գործիչներ, որոնք՝ ճշմարտիւ քաջ Հովիւներ՝ իրենց անձը գրին ի սպաս իրենց Հօտին:

Տիաղը հեգնութիւն կեանքի իրականութիւններուն:

Տաճարի վերջին թիւին մէջ, (Դեկտ. 8), շարժումն թերթերու արձագանգը կ'ըլլայինք, մասնաւոր գոհունակութեամբ որձանագրելով թէ Ն. Ս. Օծութիւնը քաջողջ վիճակի մէջ է: Այդ տողերն հրատարակուելէն հազիւ երեք օր վերջ Հայոց Հայրապետն իր վերջին շունչը կ'աւանդէր, կը մեռնէր սրտացաւէն, — տիաղը բառախաղ մը այս ալ, այդ բառն ըմբռնելով իր կրկնակ իմաստներով, ֆիզիքական ու բարոյական, երկուքն ալ ճիշտ՝ ներկայ վշտալի պարագաներուն մէջ:

Զպիտի փորձներ գծել իր կենսագրական նոթերը, այնքան հրահանգիչ՝ ներշնչած մեծ դասերովը: Ատիկա ըրին օրաթերթերը, և ի մէջ այլոց Տաճարի պատուական աշխա-

սակիցը՝ Տիար Արշակ Ալաոյաճեան, որ մասնաւոր էջ մը նուիրած է Տաճարի ներկայ թիւին մէջ ալ՝ հանգուցեալ մեծ Հայրապետին:

Բաւական է յիշատակել թէ իր վարդապետութեան առաջին օրէն (1869) դշագրաւ դեր մը կը սկսի ան ունենալ ազգային կեանքին մէջ, օրէնքի արդարութեան և իրաւունքի շերմ պաշտպան հանդիսանալով, խիզախ ու անկաշառ նկարագրով մը: Այդ նկարագիրը ի հանդէս բերաւ միշտ, իբրեւ երեսփոխան, իբրեւ կրօն. ժողովոյ անդամ, իբրեւ Ազգ. ժողովոց տեղեկաբեր, իբրեւ առաջնորդ եգիպտահայոց, իբեւ Պատրիարք Թրքահայոց, իբրեւ տարագրեալ մը, և հուսկ ուրեմն իբրեւ Կաթողիկոս Ամենայն Հայոց: Անիկա ժողովրդային իրաւունքին շերմ պաշտպանը եղաւ միշտ, ընդդէմ ամէն կամայականութիւններու, ընդդէմ նոյն իսկ բռնակալական արիւնտոս սպառնալիքներու: Անիկա արհամարհեց նիւթական ամէն վայելք ու հարստութիւն, ոտնակոխ ըրաւ պշխարհի փառքն ու պերճանքը, խրոխտ ստգտանք մ'ունեցաւ շողշողուն խոստումներու դէմ, ասպարէզ կարդաց դարերու մէջ նմանն հազուագէպ տեսնուած ու լրուած մեծ բզնակալին՝ արիւնաքրու Համիտին, ամէնէն ահարկու ճիւղղի մը դէմ ալ խիզախելով, ի պաշտպանութիւն իրաւունքի մը որ ժողովուրդինն էր. անիկա բզդոքեց տարաբախտ Հայութեան կրած հարստահարութեանց, անոր ենթարկուած յիւսններուն, անոր հեղեղանման թափած արիւնին դէմ:

Իր բոլորներն անյսեղի մնացին գաղանաբարոյ բռնտկալէն, ու չսուեցան կեղծաւոր Եւրոպայի կողմէն ալ:

Սրտի աննկարագրելի վշտով հարկադրուեցաւ լռել, բռնի լռութեան մը դատապարտուելով: Իր տարագրութեան տաններկու տարիներուն, տագնապներու ամէնէն կակծեցուցիչին հանդուրժելով, երկնաւոր Վարդապետին նման, — որուն շերմ, հաւատացեալ երկրպագուն էր, — միշտ մնաց բողոքող մը, մարմնաւորեալ Բողոքը: Եթէ գտնուէր հանճարեղ գեղարուեստագէտ մը, որ ուզէր Բողոքը ներկայացնել արձանի մը վրայ կամ նկարի մը մէջ, չպիտի կրնար լաւագոյն տիպար մը գտնել քան հանգուցեալ մեծ Հայրապետը՝ պարթեւ հասակով, խրոխտ դէմքով, հրացայտ նայուածքով, որմէ կ'արտացոլար սակայն թախիծը, անհուն վիշտի մը, ջարդուած, յօշոտուած ազգի մը անծայրածիր սառապանքին տրտում արտայայտութիւնով:

Այդ վիշտը խորունկ և անվերջ եղաւ իրեն մէջ: Հակառակ որ մեծ վտարանդին երջանկութիւնն ունեցաւ տեսնելու ազատութեան հոգակումը Թուրքիոյ մէջ, հակառակ որ ժողովրդային աննման ոգեւորութեան մը, աննախընթաց խանդալաւութեան մէջ տեղի ունեցաւ իր վերագարձը ելլողը՝ ի Բորենիին աչքերուն առջև, հակառակ որ Հայ և նոյն իսկ Թուրք ժողովրդեան երախտագիտական հրաշալի ցոյցն անշուշտ սփոփարար ազդեցութիւն մ'ունեցաւ իր վերաւորեալ արախն կոտորումներուն վրայ և կրցաւ տեսնել գլխիվայր տապալումը մեծ ճիւղղին, աւաղ, վիշտը վիշտ մնաց միշտ, նոյնքան խորունկ, նոյնքան անբուժելի:

Բռնաւորը ինկաւ, բայց հայ ժողովուրդին տագնապը չվերջացաւ: Իյ-

նող բռնակալին յաջորդեցին ուրիշ բռնակալներ, արտաքին ու ներքին։ Ատանայի կոտորածը կարեւոր խոցեց իր արդէն վերաւորուած, արիւնոտած սիրտը, բայց ատկէ աւելի խորունկ ու տեւական եղաւ իր սրտացաւը, ի տես այն անհասկացողութեան, խորունկ անհամաձայնութեան, ներքին կործանիչ անմիաբանութեան, գծտութեանց, վէճերու, պառակտումներու և կռիւներու, որ Հայուն պատմական բնորոշիչ ու քանդիչ նկարագիրն են կազմեր, աւաճ, գարերէ ի վեր, և որ կը տարածուին Կովկասէն Տաւրոս, Թիֆլիզէն Պոլիս, Հայաստանի ամենայեան գիւղին մէջ, և ընդամենայն ոլորտս աշխարհի ուր որ Հայ մը կ'ապրի, կը շնչէ։

Այդ ահաւոր չկամութիւնը մէկ մէկու խօսք հասկնալու, դառն վհատութեան մասնեց մեծ հայրենասէրը, երբ ամէն կողմ տեսաւ նոյն անմիաբան ոգին, նոյն շահախնդրութիւնը, նոյն եսամոլութիւնը, նոյն անձնասէր փառատենչութիւնը, նոյն յամառ կամապաշտութիւնը, նոյն անտեսումն ազգային ամէնէն նուիրական շահերուն՝ որ ռոմակոխ կ'ըլլային իր իսկ աչքերուն առջեւ, քրիստոնէական սէրն ու անձնուիրութիւնն իրենց նշանաբան ընտրել ուխտող եկեղեցականնին, և ամէնէն աւելի ջերմ ազգասէրի գիմակն հագնող աշխարհականնին կողմէ հաւատարապէս։

Եւ անակնկալ պահու մը, երբ Հայութեան աչքն իրեն յառած կը մնար, իրեւ խարխալ մը փրկութեան, փայլուն աստղ մը, լուսատու ջահ մը՝ Հայութեան միջին երկնակամարին վրայ, կը շիջանի յանկարծ, անասողջ,

տխուր ապագայի մը խաւարին մէջ առխարխալի թողլով վհատած ժողովուրդ մը ամբողջ, որ իրեն արժանաւոր յաջորդ մը գտնելու հնչում քով կը տագնապի։

Հանգիւր ի խաղաղութիւն, Հայրապետ սուրբ և անբիծ, Յաւիտենականին փառաց մէջ վայելէ՝ արդարապէս շահուած հանգիստ մը, զերծ աշխարհի ամէն անարդարութիւններէն, զրկանքներէն որոնց դէմ բողոքեցիր միշտ, զերծ նաև այն բոլոր փոքրոգութիւններէն, գձձութիւններէն, ամէն կարգի աղտոտութիւններէն, մոլութիւններէն ու մոլորութիւններէն, որոնցմէ զխոցար միշտ վեր, միշտ բարձր մնալ, միշտ մաքուր։

Աղօթէ, ո՛վ աստուածարեալ Հայրապետ, քու թշուառ, տառապեալ, վայրաւատին հօտիդ փրկութեան համար։ Քու աղօթքիդ մրմունջները հաճելի են գթութեան Աստուծոյն. աղօթէ՛ որ քու հոգիդ ու նրկարագիրդ՝ ոգին ու նկարագիրն ըլլան Հայ եկեղեցականութեան, քու ազգասիրութիւնդ, քու անձնուիրութիւնդ, քու աննկուն հաւատքդ զօրացնէ ամէն անոնք որոնք կոչուած են այս տառապեալ ազգին առաջնորդներն ու ղեկավարներն ըլլալու։ Աղօթէ՛, հուսկ ուրեմն, որ երկինք արժանաւոր յաջորդ մը տայ քեզի՝ Հայոց ընդհանրական հայրապետութեան առաքելական Գահուն վրայ, յաջորդ մը որ հզօր մականով մը կարենայ փարել ազգին ճակատագիրը, արժարժել ճշմարիտ կրօնի և ճշմարիտ ազգասիրութեան հուրը՝ սկեպտիկ և անձնասէր սիրտերու և հոգիներու մէջ։

ԶԱՐԾԱԹՐ ԴԱՀԱՆԱՅ

ՓՐԿԶԻՆ ԾՆՈՒՆԴԸ

(ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Ամանոր: Ահա 1911 տարինե՛ր. այսինքն Աւետարանի լուսաշող յայտնութեան նոր տարեդարձը, աշխարհի փրկագործութեան Մեծ Առեկտին՝ 1911րդ անգամ տարեկան կրկնումը:

Ապո՛ւշ մարդկութիւն, ո՛րչափ խեղճ, ո՛րչափ թշուառ ես դուն, որ քու ամէնէն փայլուն և զարգուն հատուածներուդ մէջ պայմանադրօրէն կ'անդրադառնաս, կ'անդրադառնաս հնութեան վրայ, այդ հնութեան այլակերպութիւններուն վրայ, որոնք հիմայ շահեկան չեն այլևս: Մարդկային միտքը նորութիւններ, եթէ կ'ուզէք խիզախ, ըմբոստ նորութիւններ կը սիրէ ու կը հետապնդէ: Ի՛նչ պիտի ըլլայ Քրիստոնէութիւնը, Քրիստոսը, և մա՛ն հաւանդ ո՞վ կը հաւատայ հիմայ Անոր հրաշապատում Մննդեան, որուն համար սարքուած աւանդական, հնաբոյր տօնախմբութեան մը, ցնծումներն ու խնծիղները նշանակութիւն մը ունենային: — Այսպէս պիտի ըսէին անոնք, որ ա՛լ կրօնքի վրայ լրջօրէն (?) խօսիլ չեն ուզեր: Դրականութիւն, իրականութիւն՝ ահա՛ կեանքը, ասոր նայինք, մնացածը ոչինչ է:

Եւ իրօք այսպէ՛ս է: Սա պահուն միտքէս երբեք չանցնիր ջատագովական բառ մը՝ մոլեգնօրէն չարչարուած Քրիստոնէութեան դատին համար: Զիս կը զբաղեցնէ սա պահուն, ամէն Մնունդի տօնին եղածին պէս, Հայ-Քրիստոնեայ «իրականութիւն»ը, այս բառին տրուած բոլորովին նոր իմաստով:

Եւ ի՛նչ իրականութիւն: Քանի՛ ուսումնասիրեմ նորագոյն տեսութիւնները փոխադասութեան, քանի՛ հիմնամ Պէրթըլօի, Էտիսենի, Մարքոնիի պէս խորունկ խելքերու գիտական - հրաշագործութիւններուն, որոնք Բնութեան լո՛րն և անտեսանելի ոյժերուն գեղեցկութիւնները, ներդաշնակութիւնները կ'ապացուցանեն և սա՛ն անխորտակելի փաստը կ'ընձեռեն՝ թէ

մարդը գերազանց է, բարձր բանականութեան մարմնացումն է, ստեղծող է Ստեղծագործութեան մէջ և իշխա՛նը բնութեան. այո՛, և քանի՛ ծանօթանամ Հայ-Քրիստոնեայ ցեղին, այդ ազնիւ և ընդունակ ազգին տարբեր տարբեր խաւերուն և շրջանակներուն, այնքան պերճախօս կը գըտնեմ ՓՐԿԶԻՆ ԾՆՈՒՆԴԸ Հայու հին և նոր կեանքերուն մէջ:

Մանկական և պատանեկան ըմբռնումներս և դատումներս՝ Կիլիկիոյ ծննդավայրիս մէջ, նահապետական տան մը անկիւնը, բոլորովին յիշատակներ են ա՛լ ինձ համար: Բայց սա ծանօթութիւնները Հայու պատմական կեանքին, Նախնեաց մատենագրութիւն ըսուած սա՛ շատ հետաքրքրական խոշոր հաւաքածոն, և սա՛ ցիրուցան հատուածները Հայութեան, որոնք այլաբարբառ, այլատարազ և, ճշ, այլասեռուած տեղ տեղ, այս բոլորը կ'ըսեն ինձի. թէ ո՛ւր որ ալ երթաս, Հայը իր Եկեղեցիով պիտի ճանչնաս, Հայ-Եկեղեցիով, որուն ծնունդ տուաւ ՓՐԿԶԻՆ ԾՆՈՒՆԴԸ:

Պահ մը ես ալ ինքնիրենս ըմբոստացայ այս իրողութեան դէմ, և ուզեցի իրաւունք տալ անոնց որ կ'ըսէին. «Ի՛նչ խեղճ վիճակ է այս, ի՛նչ դժբախտութիւն, որ ազգ մը իր գոյութիւնը պարտաւոր եղած ըլլայ Եկեղեցիի մը, որուն լեզուն անհասկնալի է ա՛լ, որուն պաշտօնէութիւնը տկար, որմէ իր զաւակները կ'ուծանան հետզհետէ, որուն, վերջապէս, գործը լմնցած է»:

Էջմիածնի ճամբորդութիւնս նոր նոր ծանօթութիւններ ու փորձառութիւններ տուաւ ինձ: Հայու հին հայրենիքի ուսումնասիրութիւններս մեծ ոյժ տուին ինձ չեղտելու համար Հայ-Եկեղեցւոյ նշանակութիւնը Հայու պատմական և արդի կեանքին մէջ: Կարելի չէ՛ ուրանալ բարեփոխութեան խիստ պահանջը Հայ-Եկեղեցւոյ մէջ, բայց բարեփոխութիւնը չնշանակեր թէ այդ դարաւոր կազմակերպութիւնը զաւորած է իր կրօնական և պատմական նշանակութիւնը ունենալէ. ընդհակառակը բարեփոխութեան պահանջը

կ'ապացուցանէ որ Հայ Եկեղեցին Հայու համար կարեւոր է, կենսակա'ն է: Առանց Հայ Եկեղեցւոյ՝ Հայութիւնը պիտի ընկ-լուզուէր, պիտի իւրացուէր իր ցրուածութեան մէջ, զի'նքը չըջապատող մեծ և բնական ազդեցութիւններու տակ:

Ի'նչ է էջմիածինը: — Ըստ իս էջմիածինն է Հայ-Քրիստոնէութեան խորհրդանշանը, Փրկչին մարմնաւոր Ծնունդէն ետքը Պաղեստինի անշուք մէկ անկիւնը, Փրկչին բարոյական անեղծ Յայտնութիւնն է Հայոց հոգեւոր-բնկերական կեանքին մէջ: Այնքան անեղծ ու ամուր եղած է բարեբախտաբար այդ Յայտնութիւնը Հայ Ազգին մէջ, որ Հայը ինչպէս պատմութեան մէջ, նոյնպէս արդի իրականութեան մէջ իր միութիւնն ու ամբողջականութիւնը կը զգայ իր Եկեղեցիով և ատոր պաշտօնական ներկայացումը՝ իր էջմիածինով:

Հայկական այլազան խաւեր ու շրջանակներ գիտէի արդէն: Տարօնք մասնաւորապէս արթնցուցած էր զիս իր եկեղեցական և կրօնական մեծ նշանակութեամբ, բայց էջմիածինը, Արարատեան դաշտի ծոցը՝ Արազածի և Մասիսներու դարաւոր աչքերուն տակ, Քասաղ, Ազատ և Արաքս գետերու հովիտները, սարերն ու ձորերը կրօնականացնող այդ հազարաւոր սրբավայրերը, մա'նաւանդ Ախուրեանի սգաւոր թափուկին՝ աշխարհահռչակն Սնի, որ վիթխարի յուշարձան մըն է իր եկեղեցական աւերակներով, ասոնք իրենց բոլոր ուժով, իրենց բովանդակ նշանակութեամբ կը պռուային. «Մենք Հայ-Քրիստոնէութեան մրնայուն կոթողներն ենք, թէեւ բզքտուած, աւերուած, կը խորհրդաւորենք մեզ կերտող դժբախտ Ազգին վէրքերն ու կորուստները, կը բացատրենք Հայութեան ինքնապահպանութիւնն ու անձոյ տեւականութիւնը, կը բողոքենք անոնց դէմ, որոնք կ'ուրանան այս անթիւ եկեղեցիներու ազգային-կրօնական նշանակութիւնը: Մենք այսպէս լքուեցանք, կոխուուեցանք անօրէններու և անիրաւներու բարբարոսական անդիմադրելի ոյժերուն առջեւ: Բայց մեզ չնոողները և անոնց զաւակներն ու թոռները ո'ւր որ գտնին՝

մեր նմանները շինեցին, մեզ կենդանացուցին ուրիշ տեղեր, և ազգային ինքնապահպանութեան փաստերը բազմապատկեցին: Եւ դեռ ա՛յսչափ: Հոպա մեր արուեստը, մեր ճարտարապետութիւնը, չէ՞ք տեսներ, ո՞րչափ ինքնուրոյն են և պերճախօս: Ասոնք միթէ չեն ցուցնէր որ Հայը ազգ մըն էր, և իր մինչեւ հիմա հիմնալի ճարտարապետութեան հրաշալի կերտուածքները նուիրեց քրիստոնէական մեծ և հիմնական զաղափարները մարմնաւորելու: Ի'նչ երգեր, ի'նչ շարականներ, ի'նչ տօնախմբութիւններ, ի'նչ թափօրներ, ի'նչ խրախճանքներ չլիցցուցին այս սրբավայրերը: Խանդավառ և փառաւոր տօներու ցնծումներ տեսան այս երբեմն շէնչող հոյակապութիւնները, այս քարերը, այս հողերը, այս ջուրերը: Հարցու'ր Անին չըջապատող Ախուրեանին և քեզի թո'ղ պատմէ, թէ քանի քանի՝ անգամ միւռոնի լոյս լոյս կաթիլներով օծուեցաւ Փրկչի Մենդեան տօներուն»:

Այդ հսկայ աւերակները, այդ տրիւրազդեցիկ, անձայր, անձիր ամայութիւնները՝ կարծես զգացում, ձայն, չեղտ, պերճախօսութիւն կտրած էին համակ, շատ բաներ կ'ըսէին ինձի ու կը թելադրէին: Բայց ատենց մէջ ամէնէն ուժգինը, ամէնէն յայտնին ու ամէնէն պերճախօսը Հայ Եկեղեցւոյն և Հայ-Քրիստոնէութեան արտափայլումն էր իր բովանդակ իրականութեամբ:

Ամանորը և Փրկչին Ծնունդը տարի մըն ալ հաշուեցին խորհողներու, գործողներու կեանքին վրայ: Հայ-Քրիստոնէի համար մեծ նշանակութիւն ունի Նոր Տարին և Փրկչի Ծննդեան նոր տօնը:

Օսմանեան Սահմանադրութեան շնորհիւ՝ բախտը ունեցանք վաշխելու խօսքի և գրչի աղատութիւնը: Հայ կեանքի համար շատ կարեւոր յայտնու իւններ ունեցանք երեք տարիներէ ի վեր: Վասնզի Հայեր, ամէն սեռէ և կարգէ, իրենց խելքին, իրենց զգացումներուն, իրենց գործունէութեան ապացոյցներով ու արդիւնքներով ցոյց տուին, թէ ի'նչպէս կ'ըմբռնեն իրենք Հայութիւնը, անոր ազգը, ա-

նոր Եկեղեցին, անոր Դպրոցները, անոր ընտանիքը, անոր մամուլը, անոր զարգացումն ու յառաջդիմութիւնը, անոր քաղաքացիութիւնը, մէկ խօսքով անոր «աշխարհայեացքը»: Կ'արժէ ուսումնասիրել այս բոլոր անպառ ու անկաշառ, յոռին լաւէն, լաւը լաւագոյնէն զատելու և զտելու համար: Պէտք է մասնաւորապէս չափել մեր բարոյական մակարդակի բարձրութիւնը, գիտնալու համար թէ ո՞ր ենք: Հայ Ազգին ամբողջ անցեալը, պատմութիւնը, նոյնիսկ իր մեծարժէք աւերակներով՝ մեզի կ'ըսեն, թէ գիտցէ՛ք Հայ-Եկեղեցւոյ յարգն ու արժէքը: Եւ Հայ-Եկեղեցւոյ ու Փրկչի Ծննդեան մէջ եղած կապն ու աղերսը անմիջական է: Արդ՝ Ամանորի շնորհիւ վրայ, Փրկչի Ծննդեան տօնին առթիւ մեզ համար նուիրական պարտք մին է մտածել, թէ ի՞նչպէս ըմբռնած ենք Հայ-Քրիստոնէութիւնը, կարողութիւն ունի՞նք յայտարարելու թէ հաւատարիմ եղած ենք այն Մեծ Բարոյականին, որ նպատակն է Քրիստոնէութեան և հետեւաբար Հայ-Եկեղեցւոյն, որ հարազատ պահպանի՞ն ու արտայայտի՞ր եղած է այդ Բարոյակաւնին:

Պէտք է խորհիլ որ ո՛ր է կեանքի արժէքը իր բարոյականով կը չափուի: Վարդապետութեան կամ հաւատարիքներու դրութիւնը կը կորանցնէ իր արժէքը, եթէ անկէ բոլորով Բարոյականը տկար է: Ընդհանրապէս Քրիստոնէութեան մէջ և մասնաւորապէս Հայ-Քրիստոնէութեան մէջ՝ պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնել Բարոյականին վրայ, որուն մէջ կը կայանայ յառաջդիմութեան ամէն ոյժ և զօրութիւն: Քրիստոնէութիւնը բաւական խիստ օրէնսդրութիւն մըն է, խիստ սակայն՝ անսանձներու և բարոյականի դէմ ընդվզողներուն համար: Փրկիչը յայտարարեց թէ իր լուծը քաղցր է և թեթեւ: Ամէն կազմակերպութեան մէջ կանոնները այսպէս են, հերիք է որ գործադրողը վարժուի առանց իր բոլոր պարզութեամբ և իր բոլոր հաւատարմութեամբ:

Ես կը փափաքէի որ Փրկչի Ծննդեան խորախորհուրդ տօնին ցնցող յիշատակու-

թեան հանդէպ, Հայ-Քրիստոնեաներ պատկառանքով ծռէին իրենց գլուխը: Մարդկային կեանքի վերածնութեան այս տիեզերական տարեդարձին՝ կ'արժէր իմաստուն մոգերու պէս հետապնդել ճշմարտութեան աստղը, միտքերու այս խաւարամած լորտներէն դուրս, ճշդելու համար կայանը ճշմարտութեան ծնունդին:

Երբ Ծննդեան տօնին՝ ամէնէն յետին գիւղին անշուք սրբավայրն իսկ բաղմախուռն կը հաւաքէ իր ծոցը Հայու զաւակները, երբ մեծ ու սքանչելի Խորհուրդին աւետիսովը հրեշտակային երգեր կը հնչեն, երբ այս հաւաքումն ու միութիւնը ցնծութեան, օրհնութեան երգերով կը խնկաւորուին, և երբ սիրոյ և խաղաղութեան ողջոյնը մէկ մարմնի պէս կը սրբացնէ Հայ հաւատացեալներու բազմութիւնը, պէտք է զգածուիլ, պէտք է ամչնալ, և անդրադառնալ մեր ազգին բարոյական մաքրութեան և մեծութեան վրայ: Հայոց իմաստութեանէն ծնած ոսկիի, կնդրկի և զմուռսի ընծաներ պիտի ըլլային ասոնք Փրկչի ծննդեան մասերն առջեւ:

Անկիւրիա

ԲԱԲԳԷՆ ԵՊԻՍԿՈՍՈՍ

“ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ”

Յունկարի շուռ գիշեր մ'եր.
Երկնի շրթեղ քազուհին
Լեռներու մէջ, քառուսին
Ցանցըներ եր իր շողեր:

Վերը՝ աստղեր անհամար
Տարապայման ժրպիտով
Կ'ողջունեի՛ն անվրդոյով
Դիսաւորը ոսկեվառ:

Ծառեր իրենց վեհ ճակիկն
Մարգարայեռ, ոսկեգօծ
Պըսակ կապած՝ հոծ ի հոծ
Կը ապաստե՛ն . . . հանդեսին:

Լոյս եր հագած դաշն համակ,
Որու վրայ հոյ ի հոյ,
Ոչխար ու այծ, գառ եւ ուշ
Կ'ոսոսուէին համարձակ:

Անո՛ւշ, աննենգ հովիւներ
Կը պահէին իրենց հօս
Երանակին նրսած մօս,
Ու կ'երգէին անվեհեր:

Լոյս մը յանկարծ՝ քան զարեւ
Ակնախորշի՞ն ու պայծա՛ռ,
Ողողեց դաշտ, լեռ ու սար:
Ցայգն եր ցերեկ անարեւ:

Սահմընկեցան . . . դողացին . . .
Հովիւները երգասաց,
Ու, իրենց մօս, դեմ դիմաց,
Տեսան հրեշտակ մ'երկնածին:

«Մի վախճա՛ր դու՛ք» քաւ ան.
«Աւետիս ձեզ, աջի լոյս,
«Ծընա՛ւ Մանուկ մ'հաւսակ լոյս,
«Ծընա՛ւ Մանուկ մ'աննըման:

«Ծընա՛ւ օծեալ Փրկիչ հեզ,
«Փրկիչ՝ հաւսայն մարդերու.
«Մօտիկն ե ձեր, չե՛ հեռու,
«Այս բող ըղբայ նըջան ձեզ:

«Դաւթի քաղիկն մեզ ահա՛,
«Պիտի գրեցիք մի Մանուկ,
«Խանձարուրին մեզ քաղիկ,
«Պատուած՝ Ան կը իրնանայ»:

Ու թրոսա՛ւ վեր՝ նոյն հեռայն
Սոխակն երկնի ոսկեթել
Խընդապասար ու թեթել:
Ի՛հա՛ս զօրեւ խոռոկներս,

Կապոյտին մեջ թրոնած պար,
Մեղեդի մը շատ անո՛ւշ
Կ'երգէին վերն՝ մեղսնոյշ,
Միանըւաց, խանդավառ:

«Փա՛նք ի քարձունս Աստուծոյ,
«Խաղաղութի՛ւն եւ յերկիր,
«Մարդերու մեջ՝ սիրայի
«Հաճութիւն քաղոք, մըջագոյ»:

ԼՈՒՍՆԹԱԳ

ԻԶՄԻՐԼԵԱՆ՝ ՊԱՏՄԱԳԷՏ

Ամենայն խնդիր որ պատմութեան
կը վերաբերի՝ պատմութեան վեր-
շուծմամբ կը պարզուի եւ կը
շուծուի:

ՄԱՏԹԻՍ ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ

Էջմիածնի երջանկայիշատակ Գահակալը
փառաւոր մուտքով մը և յաղթական գր-
նացքով իր գահիճին ճակատելէ վերջ,
առանձնացած էր Սկիւտարի անշուք բնա-
կարանը:

Դեռ ու է պաշտօն չստանձնած՝ կըր-
ցայ օր մը իրեն ներկայանալ մասնաւոր
զիտումով մը: Այն ատենէն իսկ կ'ըսուէր թէ
Ն. Ս. Օծութիւնն արդի հոգեւորականու-
թեան և մասնաւորապէս զարգացած Հայ
եկեղեցականութեան վրայ հաշտ աչքով
չի նայիր: Այս պատճառով հետաքրքրաշարժ
էր անշուշտ ուղղակի իրմէ լսել այդ մասին:

Պայմանագրական խօսքերէ վերջ՝ երբ
լսեց Դպրեմանքի մը ըլլալս, առաջին
հարցումը եղաւ.

— Ի՞նչ է Արմաշի մէջ այժմ գործածու-
թեան մէջ եղող ծրագիրը:

Այս հարցումը՝ շեշտուած մանաւանդ
այդ պատկառազդու անձին բերնէն, քիչ
մը չփոթեցուցիչ էր: Իր առաջին Պատ-
րիարքութեան ատեն քննական է որ Դպրե-
մանքի ուսումնական և վարչական ծրա-
գիրները յայտնի էին իրեն: Կարծես Սրբա-
զանը միտքէս անցնող այդ վայրենական
մտածումը դէմքիս վրայ կարգաւով, ան-
միջապէս աւելցուց.

— Իմ Պատրիարքութեանս շրջանէն վերջ
կ'երեւի թէ հոն բաւական փոփոխութիւն-
ներ տեղի ունեցած են: Թերթերու մէջ
երեւցող կարգ մը գայթակղալից յօդուած-
ներ դժբախտաբար Արմաշականներէն ստո-
րագրուած էին:

Ա՛լ տարակոյս չէր վերցնել Սրբազանին
առաջին հարցումը. ան կ'ուզէր գիտնալ
թէ արդեօք Մուշեղ և Կորիւն վարդա-
պետներու հրապարակած գաղափարները
դպրոցին մէջ կը դասաւանդուէին:

— Սրբազան Հայր, պատասխանեցի, բոլոր Արմաշակահայերը պէտք չէ դատել այդ երկու յօդուածագիրներէն, և կրնամ ըսել թէ այդ երկուքն ալ պէտք չէ դատել իրենց գրութիւններէն: Դպրոցին ծրագիրը սկիզբէն ի վեր նոյնը մնացած է: Պարբերականներու մէջ մեր վարդապետներուն գրած յօդուածները և յայտնած կարծիքները՝ արդիւնք են իրենց ուսումի չըջանող ատեններուն և ուսումնասիրութիւններուն: Կրնամ ըսել թէ այդ գաղափարները յաճախ կը յայտնուին եւրոպացի հեղինակի մը աշխատասիրութիւնը կարդալով, և այդ հեղինակին թողած թարմ ազդեցութեան ներքեւ:

— Ես կը կարծեմ թէ, յարեց Սրբազանը, Արմաշի մէջ պէտք եղածին պէս հող չի տարուիր պատմական ճիւղին և մասնաւորապէս ազգ. պատմութեան: Ապա թէ ոչ այն տեղէն ելլող վարդապետները, լաւ ուսումնասիրած ըլլալով Ազգին և Եկեղեցիին անցեալն ու ներկան, չպիտի տարուն երեք օտար բուն հոսանքներէ: Ես հակառակորդ մը չեմ գիտական հետազօտութիւններով Կրօնքի և Եկեղեցիի մասին եղած յայտնութիւններուն, կը բաւէ որ անոնք լուրջ և փաստացի ըլլան, մարդոց չինութեան ծառային, և ոչ թէ իբրեւ նորութիւն մը հրապարակ հանուելով այս կամ այն անձին համբաւը տարածեն:

Սրբազանը այս ուղղութիւնով դեռ երկար ատեն խօսեցաւ, և ես հիացիկ ու շաղկապեալով մը մտիկ ըրի զինքը: Մանաւանդ երբ յայտնեց թէ Երուսաղէմի մէջ իրեն սեփական զբաղումներէն մէկն ալ կրօնից պատմութեան վրայ գրուած գիրքերը և տեսութիւններն եղած են, ա՛լ բոլորովին ուղղութեան իր մասին ունեցած թիւր ըմբռումներս, և իր քովէն մեկնելէ վերջ ակամայ ստիպուեցայ խորհիլ թէ քանի՞նե՛ր արդեօք ինձ պէս պիտի ընէին, եթէ գոնէ անգամ մը զինքը տեսած և իրեն հետ խօսած ըլլային:

Արդարեւ շատերու յայտնի են և կրնան ըլլալ իր անձին սրբութիւնը, գործունէութիւնը, վարչագիտութիւնը ևն.

են, և Բայց իր պատմագէտ մը ըլլալը և հետախուզող, պրպտող միտք մը ունենալը կը կարծեմ թէ յայտնուելու պէտք ունի, քանի որ իր այդ կողմը հազիւ թերեւս յայտնի է անոնց որ անցեալին մէջ առիթը ունեցած են իր ատենախօսութիւնները լսելու Երեսփ. Ժողովի բեմէն, և ներկայիս մէջ ազօտ գաղափար մը միայն կը կազմեն իր հանգիստին առիթով գրուածներէն: Իմ մասնաւոր տեսակցութիւնս ալ չպիտի զօրէր այդ մասին կատարեալ գաղափար մը տալու, եթէ այսօր մենք տրամադրելի չունենայինք իր պատմական մէկ երկասիրութիւնը, «ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ԱՂԹԱՄԱՐ ՈՒ ՍԻՍ»(*):

Այդ ատեն արդէն «ինը տարիներ Ազգ. Վարչութեան և Մկրտիչ Սրբազանի»(**) միջև բանակցութեան նիւթ» եղած է էջմիածնի և Սիսի փոխադարձ յարաբերութիւններու խնդիրը, որ շատ աւելի առաջ, ԺԵ. դարու կէսէն սաղին գոյութիւն ունէր և տակաւին ունի, քանի որ ճշգրիտ կերպով չէ սահմանուած այն ուղղութիւնը, որուն համեմատ պիտի վարուն իրարու հանդէպ կրնամ ըսել մեր բոլոր զահակաւները էջմիածնի, Սիսի, Աղթամարի, Երուսաղէմի, Կ. Պոլսի:

Այս խնդիրը այսօր ազգային ուրիշ կենսական հարցերու քով բոլորովին կորսնցուցած է իր այժմէութիւնը, բայց քանի որ Իգմիլիւեան Սրբազան անոր մէջ յայտնուած է իրրեւ պատմագէտ և պերճաբան ատենախօս, կ'արժէ սր համառօտ կերպով մը վերլուծենք զայն:

Անվիճելի կերպով այսօր հաստատուած է թէ Հայ Եկեղեցին իր առաքելական անկախ հիմնարկութիւնը ունի, իրեն համար յատկապէս սահմանուած իշխանութիւնով, իրաւասութիւնով և պարտաւորութիւններով: Եթէ իր այն առանձնաշնորհումները յաճախ վէճի և կասկածի ենթարկուած են,

(*) Տպագր. Կ. Պոլիս, Զարդարեան, 1882, Պուճի մէջ հրատարակուած շարունակաբար, եւ յետոյ առանձին հատր եղած:

(**) Սիսի նախկին կաթողիկոս Մատաշի Բեյքսիզեան Տ. Մկրտիչ եպիսկոպոսն է:

ատիկայ կա՛մ տիրապետել ուզող Եկեղեցի-
ներուն բռնութեան և կամ մեր հայրա-
պետներուն ապիկարութեան արդիւնքն է :
Գտնով Հայ Եկեղեցիի ներքին երկպառա-
կութիւններուն՝ ասոնք ալ ոչ նուազ իշ-
խոնութեան տիրացողներուն փառամոլու-
թիւնէն և շահախնդրութիւնէն ծագում առած
են : Մասնաւորապէս խօսելով Էջմիածինի
Գէորգ Դ. և Սիսի Մկրտիչ Բէյֆաիկեան
կաթողիկոսներուն համար, պէտք է խոս-
տովանիլ թէ երկուքն ալ կարող և իրենց
Աթոռին ու պաշտօնին արժանապատու-
թիւնը բարձր պահող անձիւր, չեն ուզած
փոխադարձ զիջումներով իրաւախօնութեան
մը դալ : Իզմիրեան Սրբազան՝ իբրեւ
«Միաբան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի» (*)
խտորէն դատած է Բէյֆաիկեանը, և նոյն
խկ պահանջած է Սիսի աթոռը ենթարկել
Պոսոյ պատրիարքութեան՝ իբրեւ Ամնայն
Հայոց հայրապետական փոխանորդի՝ անմի-
ջական հսկողութեան :

Ներուի ինձ հոս միջանկեալ գիտողու-
թիւն մը բնել : Ութսունական թուական-
ներուն Իզմիրեան կրնար խորհիլ թէ Ազ-
թամար ապստանը և Սիս յարձառ կաթողի-
կոսութիւններ են միայն, Գ. Օտեան կրնար
իրաւամբ կարծել թէ անոնք Ս. Էջմիածնի
հալառակ արքունիք են միայն, բայց այսօր
դարերը և բարքերը փոխուած են : Պատ-
մութիւնը տեղի ևս լուսաբանուելով՝ հաս-
տատուած է որ այն երկու աթոռները իրենց
գոյութեան իրաւունք մը չլինած են շատ մը
պոտճառներով, և այսօր նորագոյն պատ-
մադէտներ կը խորհին ապրեցնել և յաւեր-
ժացնել ոյգ մասնաւոր կաթողիկոսութիւն-
ները, ճիշտ այնպէս՝ ինչպէս անցեալին մէջ
Ս. Էջմիածնի կապուած կ'ապրէին Վրաց
և Աղուանից կաթողիկոսութիւնները, երբ
դեռ մեզմէ բաժնուած չէին :

Ես կը կարծեմ թէ մեր Եկեղեցին բա-
րեփոխումէ առաջ պէտք ունի բարեկար-
գումի մը, այսինքն կազմակերպուելու,
որպէսզի հետզհետէ կամայականութիւններ
մուտ չգտնեն հոն, և գտնուածներն ալ

(*) Այս բառերը յաճախ կը օտարաբան իր սո-
րագործեան հետ, ինչպէս իր երկասիրութեան ալ
վրայ :

վերջնական կարգուսարքի մը տիրապե-
տութիւնովը չքանան :

Ն. Ս. Օձուրեան՝ Հանգուցեալ Հալ-
րապետին ալ գլխաւոր փափաքներէն մին
այս եղած ըլլալու էր, երբ կ'ուզէր Եկե-
ղեցական Ընդհանուր Ժողով մը գումարել
Մայր Աթոռին մէջ : Ասոր ամենէն մեծ ա-
պացոյցը կրնանք նկատել իր գիրքին եզ-
րակացութիւնը զոր՝ կարեւոր համարելով,
մէջ կը բերենք քիչ մը անգին :

Այսքան ստուար գործի մը մէջ ման-
րամասնօրէն լուսաբանուած խնդիր մը
կարծեմ իրաւունք կուտայ մեզի խորհելու
թէ պատմութիւնով ա՛յնքան զրաղած և
ծայր աստիճան ընթերցասէր անձ մը կրր-
նայ ուրիշ ձեռագիրներ ալ ունենալ : Կը
սպասենք անոնց յայտնուելուն, մասնաւոր-
ապէս այս ժամանակ երբ եկեղեցական
բարեկարգութեան հարցը անհրաժեշտօրէն
երեւան ելած է, և ստիպողական պէտք
կայ Իզմիրեանի, Օրմանեանի, Դուրեանի
և Ռուսահայ ուրիշ համալսարանական
պատմագէտ և պատմագիր անձերու լուրջ
և խորազնին տեսութիւններուն և կար-
ծիքներուն :

Պեշիկբաշ

ՀՐԱՆՏ ՎՐԴ.

Էջ ՄԸ ԻԶՄԻՐԵԱՆ ՀԱՅՐԻԿԷՆ

Առաւիկ եռանկայիչասակ Հայրապետին երկա-
սիրութեան ուշագրաւ հաջողութիւն, որուն
սկնատկած է Գեր. Տ. Հրանտ Վ. Յովսէփ-
եան նախընթաց յօդորոշին մէջ :

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ամբողջ գործոյ մէջ Ազգային եկեղե-
ցական անցեալ և ժամանակակից պատ-
մութեամբ, ազգային եկեղեցական Ընդ-
հանուր Ժողովոյ սահմանադրութեամբ, և
Թուրքիոյ Հայոց ներկայացուցիչ երեսի-
խանական Ժողովոյ որոշմամբ և Հայրա-
պետական ու Պատրիարքական պաշտօնա-
գրովք ապացուցինք և հաստատեցինք :

Ա. Թէ՛ Հայաստանեայց առաքելական
Ս. Եկեղեցւոյ Հայրապետութիւնը մի, և

Ս. Թալէոս և Բարթողիմէոս առաքելոց և Ս. Գրիգոր Լուսաւորչի աթոռակալ յաջորդութեամբ հաստատեալ է, իրեն յատուկ ընդհանրական ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՄԲ, ինքնուրոյն ԻՇԽԱՆՈՒԹԵԱՄԲ և անկախ ՎԱՐՁՈՒԹԵԱՄԲ, և պատասխանատու ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ առ Աստուած, առ Ազգն և Եկեղեցին Հայոց:

Բ. Թէ Հայաստանեայց հայրապետութեան Մայր Աթոռն և համօրէն Հայկազանց միութեան կեդրոնը Ս. Էջմիւծիւնն՝ Հայաստանեայց ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՆ է, որ հրաշալի ճարտարապետութեամբ ՄԻԱԾԻՆ ԲԱՆԻՆ, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով հիմնեալ է:

Գ. Թէ՝ Ս. Էջմիածնի Մայր Աթոռոյ գահակալ ՀԱՅՐԱՊԵՏԲ Միայն օրինօք և իրաւամբ Առաքելական և լուսաւորչական օրինաւոր ՅԱՋՈՐԴ են, և ծայրագոյն ՊԱՏՐԻԱՐԺ-ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ամենայն Հայոց, որք ընտրութեամբ համօրէն Հայ ազգին և Եկեղեցւոյն կր բարձրանան յառաքելական յայն գահ և յիշատակութիւն Հայրապետութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ:

Դ. Թէ՝ Ս. Էջմիածնի գերագահ Աթոռոյ Հայրապետաց իշխանութիւնն ու իրաւաւորքիւնը՝ ըստ սահմանելոյ եկեղեցական կանոնաց, ընդհանրական է, և ԿԸ ՏԱՐԱԾՈՒԻ համայն ՀԱՅՈՑ և հայկական Ս. Եկեղեցւոյ անխտիր ամէն կարգի և աստիճանի ՊԱՇՏՈՆԷԻՑ վրայ, որք պարտին հպատակ մնալ և հնազանդ ամենայն կանոնական հրամանաց նոցա:

Ե. Թէ Հայրապետական Մայր Աթոռոյ դարաւոր ժամանակաւ յարեւելից յարեւմուտս աստանդական թափառիկ պանդրիսութիւնն ազգին փաղափախ վիճակէն միայն պատճառեալ է, որ 1441 թուականին ի Ս. Էջմիածին գումարեալ Ազգային Եկեղեցական ընդհանուր ժողովոյ որոշմամբ և վճռով վերջ գտած՝ և Հայրապետական աթոռը վերստին յիշադրուած է ի տիրասահման աթոռատեղին ի Ս. Էջմիւծիւն:

Զ. Թէ՝ ամբողջ Հայ Ազգն որ ի Թուրքիա, ի Ռուսաստան, ի Պարսկաստան, և

յայլուր, ցայսօր ժամանակի զՍ. Էջմիւծիւն և եթ զիսէն և ճանաչեն ՄԱՅՐ ԱԹՈՒ Հայրապետութեան և ԿԵԴՐՈՆ միութեան ամենայն Հայոց:

Է. Թէ՝ Աղթամարայ Կաթողիկոսութիւնը Տ. Դաւիթ Թոռնիկեանի և իւրայնոց ապաստարութեամբ, 1113 թուականին, իսկ Սոյ Կաթողիկոսութիւնը Տ. Գրիգոր Մուսարէկեանցի յանառութեամբ, 1441 թուականին սկսած՝ և ազգային իշխանութեան անդօրութեան պատճառաւ շարունակելով՝ արդ հաստատութեան ոյժ և տոբութիւն առած են:

Ը. Թէ՝ Աղթամարայ և Սոյ աթոռակալաց հոգեւոր իշխանութեան և իրաւաւորեան սահմանն է՝ ընդ վերին տեսչութեամբ ամենայն Հայոց Հայրապետութեան և ընդ անմիջական հսկողութեամբ Կոստանդնուպոլսոյ Հայրապետական փոխանորդ Պատրիարքական իշխանութեան, Աղթամարայ և Սոյ վանքերը կողմաւորել և անոնց թեմական Վիճակոց վրայ մօտէն հսկել, և նոյն Վիճակոց համար միայն Ս. Միւռոն օրհնել և Եպիսկոպոս ձեռնադրել ի կրօնականին և ի փաղափախներն առ ազգային կեդրոնական վարչութիւնն համառատ պատշաճութեամբ:

Արդ՝ ըստ որում Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ Հայրապետութեան և Աղթամարայ ու Սոյ Կաթողիկոսութեանց ծագման և իշխանութեան ու իրաւաւորեան նկատմամբ այս է պատմութեան վճիռը:

Ըստ որում ի գանազան պետութիւնս ցրուեալ և հպատակ Հայ ազգին կենսական շահն ազգային միութիւնն ու ամբողջութիւնը անբաժան պահուելուն մէջն է, որ ազգային եկեղեցական իշխանութեան միութեան պահպանութեամբ և եթ ապահովեալ է, և

Ըստ որում Տ. Մկրտիչ Արքայան Մարաշի իր պաշտօնավարութեան թուականէն սկսեալ կրօնական և ազգային անկախ և առ ազգն անպատասխանատու նոր առանձնացնողութեամբ Սոյ Կաթողիկոսութեան պաշտօնը վարելու պահանջմամբ և զայն իրականացնելու արարքովն ու ընթացքով նոյն միութեան կապը խզել, և

գլխիկի համօրէն ազգային եկեղեցական իշխանութեան միութենէն բաժանել կ'աշխատի ի մեծ վնաս ազգին՝ մանաւանդ Սոյ վանուց և Կիլիկեան Վիճակոց :

Կ'եզրակացնենք ուրեմն թէ՝

Ա. Տ. Մկրտիչ Սրբազանի արարքն և ընթացք հախառակ է գլխովին եկեղեցական և ազգային ամենայն կանոնաց եւ օրինաց , և իբր այն անիրաւ է և անարդարանալի :

Բ. Աղթամարայ և Սոյ Կաթողիկոսութիւններն ցորչափ ժամանակ տեւեն շարունակել , պէտք առ Հայրապետութիւնն ամենայն Հայոց հոգեւոր հնազանդութեան պայմանաւ Կոստանդնուպօլսոյ Հայրապետական փոխանորդ Պատրիարքական իշխանութեան եկրարկեալ մնան՝ յանվթար պահպանութիւն միութեան և ամբողջութեան ազգիս և ի շինութիւն բազմադարեան նահատակ , բայց ընդ միշտ յաղթական մարտիրոս Քրիստոնէական անդրանիկ ամենասուրբ Եկեղեցւոյս Հայաստանեայց , ոյր հովանեաց ներքեւ ապրեցաւ Հայ ժողովուրդն իբրեւ Հայ յանցելուին , կ'ապրի արդ և պիտի ապրի առ յապայն :

ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿ. ԻԶՄԻՐԼԵԱՆ

ՅՈՒՇԵՐ

ՀՈԳԵԼՈՅՍ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ
ՕՐԵՐԷՆ

Հազիւ պատանեկան տարիքը թիւալորած էի , երբ դեկտեմբերի անձրեւոտ օր մը , ժողովրդային անսահման խանդավառութեան մը մէջ , Իզմիրլեան Սրբազանը Պատրիարք բերին :

Մեր շուրջը տիրող տարիներու մեռելութեան մէջ , իբր հրեղէն ամպ մը , ինքն յանկարծ կը բոցավառէր մթնոլորտը , կեանք բերելով Պատրիարքարանին մէջ :

Մինչև այն օրը ժողովրդային խանդավառութեան վրայ գաղափար մը կազմելու առիթը չէի ունեցած ես , և անեղագոյ , հուժկու , զայրագին բան մը կը տեսնէի

այդ ծափերուն , այդ կեցցէներուն և այդ ցոյցներուն մէջ , որոնց առարկան էր իմ մանկութեանս բնակավայրին քարոզիչը :

Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյն մէջ ամէն կիրակի տեսած էի զինքը սեղանին վրայ կամ դպրոցէն դարձին իր սենեակին խորը բազմած : Իմ մանուկ գիտակցութեանս մէջ ոչինչ տեսած էի իր վրայ արտասովոր , բացի այն պատկառելիութենէն և այն անաչառ նայուածքէն որ զիս կեցած տեղս գամելու կարող էր :

Հիմա զինքը կը տեսնալի խանդավառութեան մը առարկայ , և բնական է թէ զարմանքս անսահման էր :

Նոյն տարին արդէն Սկիւտարէն Գում-Գաբու փոխադրուած , դարձեալ դիպուածին բերմամբ , աւելի մօտէն առիթ կ'ունենայի հետեւելու իր ամէն մէկ քայլին :

Նոյն այն խիստ նայուածքը , նոյն այն պատկառաւոր կերպարանքը ունէր դարձեալ , ու քիչ մը աւելի կարծես ծանրախոհ դարձած էր : Ամէն առտու տակաւին կէսմութ կէս-լոյս կը տեսնալի իր երթը դէպի Պատրիարքարան , և ճրագները վառուած կ'ըլլային երբ ինքը կը դառնար տուն :

Իր պաշտօնին գերի , արդէն ծանր գալ սկսած էր պաշտօնէութեան , որ չափազանց կը նեղուէր իր խստապահանջութիւններէն , մանաւանդ իր այն քիչ մը ծանր ճշդապահութենէն , որ զիրենք շատ նեղելու հանգամանք ունէին :

Տակաւին հազիւ 8—10 օրուան պատրիարք էր , երբ Ծնունդը վրայ հասաւ :

Ծրագալոյցի իրիկունը յանկարծ անակալաւորէն կարդացուեցան խրիմեան կաթողիկոսի կոնդակները , զորս Աշրգեան չորս տարիներէ ի վեր պահած էր :

Խանդավառութիւնը անսահման էր :

Կաթողիկոսին և իր հօտին մէջ արգելք ըլլալու այդ փորձը մէկ հարուածով կը վերջանար : Ասիկա առաջին դասն էր զոր երկաթէ Պատրիարքը կուտար Համիտին , Հայ Եկեղեցւոյ ներքին գործերու խառնուելու իրաւունքը ժխտելով : Այս առաջին հարուածին ուրիշներ ալ պիտի յաջորդէին յետոյ , մին քան զմիւսն աւելի զայրացնող Համիտը , սակայն մէկը միւսէն աւելի արդար և օրինական :

Իզմիրլեան միայն երկու բառ ունէր իրեն նշանաբան, և այդ երկու բառերը — օրէնք ու արդարութիւն — կազմած են իր բովանդակ կեանքի առանցքը: Իր իղձը օրէնքին ու արդարութեան տառական գործադրութեան համար տեսակ մը ձիրք դարձած էր իրեն համար, և բոլորովին անընդունակ դարձուցած այն թեքումներուն ու սպրդումներուն համար, որոնք դիւանագիտական շարժումներ կը համարուէին:

Օրինակի համար երբ համիտական կառավարութիւնը Իսլամները արդարացնելու, և Հայերը՝ կրօնական զգացումները վիրաւորող ցոյց տալու համար, իբր թէ Անատոլիոյ խռովութիւններէն վնասուած մզկիթներու ի նպաստ բացուած տոմսակներէն Պատրիարքարան ղրկեց՝ Հայերէն ալ նպաստ ստանալու համար, Իզմիրլեան չհանդուրժեց ասոր, անոր համար որ ասով ընդունած պիտի ըլլար մզկիթներու Հայոց կողմէ վնասուիլը: Հետեւաբար ետ դարձուց բոլոր այդ տոմսակները քաղցիրով մը, որով Պատրիարքարանի կողմէ կը ստանձնէր Հայերու ձեռքով ու է քանդուած և վնասուած մզկիթ վերաշինել, եթէ ցոյց տրուէր, պայմանաւ որ կառավարութեան կողմէ չինուէին բոլոր ազգային հաստատութիւնները և եկեղեցիներն ու դպրոցները, որոնք զո՞հ գացած էին խուժանին կատաղութեան, հայկական կոտորածներու ատեն:

Իր այս պահանջը բուռն էր, սաստիկ, այլ սակայն արդար ու օրինաւոր: Սակայն ռեժիմի մը մէջ ուր արդարութիւնը միայն թուղթի վրայ գոյութիւն ունէր, բնական է թէ Իզմիրլեանի ուղղութիւնը հաճելի պիտի չթուէր. և այնպէս ալ եղաւ:

Օրէ օր մտախոհ ու ընկճուած, օր մըն ալ չտեսնուեցաւ որ անցնէր կանուխ իր սովորական հանդարտիկ քայլերովը, բարակ ու աննշմար գաւազանը ձեռքը և հագիւ մէկ բարապանովը: Ըսուեցաւ որ հրաժարած էր և այդ հրաժարականը ընդունուած: Քանի մը օր յետոյ Սկիւտար փոխադրուեցաւ, և յետոյ լսեցինք որ երբևէ սաղէմ աքսորուած էր:

Յետոյ, քանի մը տարի ետքը միայն հասկցանք թէ ի՞նչ էր իր նշանակութիւնը և ի՞նչ դեր կատարած էր այդ ջղուտ, պատկառելի ու ազդու մարդը, իր այդ հանդարտիկ երեւոյթին մէջ հուժկու անհատականութեան մը մեծութիւնը ցոյց տալով:

ԱՐՇԱԿ ԱԼՊՈՅԱՋԵԱՆ

ԳՆՈՒԱԾ ԺԱՄԱՆԱԿԸ ԳԻՏԱԿՑՈՐԷՆ ԱՊՐՈՒԱՄ, ԿԵԱՆՔՆ Է

Ի՞նչպէս կարելի է գնել ժամանակը. — Արժանաւոր կերպով ապրելով կեանքը:

Միջոցներ, ա՛յն քան բազմաթիւ են անշուշտ, որքան յազմազան են մարդկային միտքն ու սիրտը վարող սկզբունքներն ու մեծ զգացումները: Բայց անկարելի չէ յառաջ բերել հոս քանի մը կարեւոր կանոններ, որոնք կրնան բարի ազդեցութիւն մ'ունենալ աշխարհն ու կեանքը ըմբռնելու մեր ընդհանուր տրամադրութեան վրայ:

Կեանքը արժանի կերպով ապրելու համար ՊԵՏԻ է.

1. Լուրջ ըլլալ կեանքի խորհուրդին հանդէպ.

2. Քիչ կշռել կ'հանքին նպատակը.

3. Համուռուած ըլլալ թէ կեանքին արժէքը 'զը չափուի ոչ այնքան տեւողութեանէն՝ որքան բովանդակութենէն.

4. Յիշել միշտ թէ կու'ն մըն է կեանքը, և հետեւաբար ըստ այնմ պատրաստուիլ. ո՛չ թէ սակայն անվրէպ յաղթանակի պէտքով միտ յոյսով, այլ իր զարտականութիւնը կատարել կոչուած զին ուորի մը գիտակցութեամբ.

5. Չափազանց չենթարկուիլ անցեալին ազդեցութեանը, ոչ ալ չափէն աւելի ապաւինիլ ապագայի ակնկալութիւններուն, ներկան անտեսելու չափ.

6. Չմոռնալ թէ արեւաշող տիւրին սկզբնաւորութիւնը մեղմ արշալոյս մըն է միշտ, ու չարհամարհել կեանքի խոնարհ ծագումները:

7. Վերջապէս մտածել յաճախ սա մեծ ճշմարտութեան վրայ թէ մարմնաւոր կեանքի քայքայումէն վերջ մարդս պիտի ապրի տակաւին, ոչ միայն անկարեւոր կեանքի մը յաւիտենականութեան, այլ նաեւ ապրող սերունդներու մտքին մէջ, իբրեւ յիշատակ ապրուած կեանքի մը:

Այս եօթն սկզբունքները կրնան իրաւամբ նկատուիլ եօթը յեռակէտներ, որոնց վրայ կը հաստատուի կեանքի իմաստասիրութեան շէնքը, ապրելու արուեստին ողջ մտութիւնը:

*
* *

Պէտք է արդարեւ լուրջ ըլլալ կեանքի խորհուրդին հանդէպ. փոքրոգի մարդիկ միայն թեթեւութեամբ կը դատեն զայն: Որչափ ալ սրտառուչ ըլլայ իմաստունին հառաչանքը, ստուեր մը չէ ան, ո՛չ ալ ունայնութեանց ունայնութիւն, այլ ամենաստոյգ իրականութիւն մը զոր անկարելի է արհամարհել:

Ապրելու բաղձանքը որ ամէն էակի մէջ բնածին ձգտում մըն է, հոգեկան առողջութեան ո՛չ միայն նշան է այլ և պայման. կեանքէն ձանձրանալ՝ սկզբնաւորութիւնն է բարոյական անտաւորումի մը, որ կրնայ չուտ և չատ վտանգաւոր դառնալ, եթէ կանխահոգ իմաստութեամբ չխափանուի իր ծագումին մէջ նոյն իսկ:

Առողջ և զգաստ մարդոց համար քաղցր ու սիրելի է միշտ կեանքը, իր ամէնէն մեծ դժուարութիւններուն մէջ իսկ: Բանաստեղծի զգայնութիւններ կրնան ամպածած տեսնել կեանքի երկինքը, խորհրդապաշտ հոգիներ կարող են հանդերձեալ ստուգութեանց սահմաններուն վրայ թեւածել, ուրանալու համար ներկային՝ այս կեանքին արժէքը: Պէտք է վստահ ըլլալ թէ իրենց ո՛ր և է լրջմիտ մէկ վայրկեանին, — թէ՛ իսկ իրենց ոգեւորքի պահն ըլլայ այն — մարդոց մեծամասնութեան հետ պիտի տարուին անոնք մտածելու թէ «կաթիլ մը իրական կեանքը չափ աւելի կ'արժէ քան անորոշ լինելութեան մը անլախճանութիւնը»:

*
* *

Այսպէս չեն կրնար մտածել անոնք միայն, որ զօրաւոր ըմբռնում մը չունին կեանքի նշանակութեան մասին. ու խորհելով թէ հաճոյքն է անոր բուն նպատակը, չուտով կ'ընկճուին անդամադրելի կարծուած վիշտերու միայն հեռապատկերին իսկ առջև:

Ո՛չ, վիշտն ու հաճոյքը չեն ու չեն կրնար երբէք ըլլալ նպատակը կեանքին: Անոնք դէպի այդ նպատակը տանող այն ճամբան են միայն, մերթ ծաղկաղուարճ ու մերթ փշալից, ուսկից պէտք է անցնի մարդը, ընթանալու համար դէպի մտադրաբար կաւարեցուցեալ: Վասնզի կեանքին նպատակը՝ անձին կատարելագործումն է միայն, այսինքն ազնուացումը մեր հոգիին. բարձրացումն ու գեղեցկացումը մեր իմացական ու բարոյական կարողութիւններուն, հետդնտէ ինքզինքը աւելի ազատ և նոյն ստեղծաւելի պատասխանատու զգալու կարողութեան ստացումը:

«Մարդուն համար ապրիլ կը նշանակէ անիլ իր էութեան բոլոր մասերովը, իր սիրտովն, իր իմացականութեամբը, իր խիղճովն, իր սէրերովը, և այն ամէն բաներովն որոնք զմեզ զօրաւորագոյն և լաւագոյն անհատները կ'ընեն»:

Կատարելութեան այդ ճամբուն վրայ անընդհատ կարենալ քայլելու համար, մարդ միայն պէտք ունի մերթ վիշտերու խթանին և մերթ հաճոյքին ձգողութեանը:

*
* *

Ճամբայ մին է ուրեմն այսպէս, կեանքը, որուն կարեւորութիւնը կախում ունի ո՛չ այնքան իր տեղութեան չափէն, որչափ բնութեանէն այն տեղւոյն ուր ան կը հասցնէ զմեզ: Երբ կ'ըսուի թէ կեանքը կարճ է, անշուշտ ոչ թէ կ'ակնարկուի իրենց թարմութեանը մէջ հնձուած վաղամեա կեանքերուն, այլ ընդհանուր առմամբ ժամանակի այն անբաւականութեան, զոր ամէն լուրջ ու բարի անձ կը զգայ, իր վրայ հարկադրուած պարտականութիւններուն շնորհիւ:

Կարճ է կեանքը, արդարեւ, ո՛չ թէ ըստ ինքեան, այլ բաղդատմամբ անհունապէս բազմաթիւ այն պարտականութիւն-

հետոն, զորս իր վրայ ծանրացած կը տեսնէ կատարելութեան ձկտող անձը:

Բարի և իմաստուն մարդուն կորովին առջեւ արդարեւ վայրկեան մըն է կեանքը. բայց այդ վայրկեանն ալ բաւական է՝ տեսական ու մեծ գործերուն ծրագիրն յղանալու և գործադրելու համար. ու միայն այն մասնութիւնը թէ մենք պիտի ապրինք մեր գործերուն տեսականութեանը մէջ, ո՛չ միայն կ'ուժովցնէ մեր մէջ գործունէութեան եռանդը, այլ նաև աներկիւզ և զուարթ կ'ընէ զմեզ մահուան արհաւիրքին հանդէպ, այն պայծառ վստահութիւնով, որ երբեմն ըսել կուտար մեծ մարդու մը, իր ոգեւարքի մահիճին մէջ. «Ձե՛մ վտանար, վասնզի գիտեմ թէ մարդիկ կ'ապրին իրենց մեռնելէն վերջն ալ»:

* *

Եւ ինչպէս պատերազմող զինուորը պէտք ունի զինքը սրտապնդող ձայնի մը կամ դրօշի մը, նոյնպէս և այդ վստահութեան պէտք ունի մարդս միշտ, ներքին բերումներով և արտաքին ազդեցութիւններով, մրցումի տաժաններով ու տառապագին տքնութեանց յոգնութիւններովը շինուած այս գոյութեան վիճակին մէջ, որ իրաւամբ կոչուած է կեանքի կոխը: Արդարեւ կռիւ մըն է կեանքը, և, ինչպէս կ'ըսէ մեծ բանաստեղծը, «կ'ապրին անոնք միայն որ կրնան մղել խաղաղութեան պատերազմը, անոնք որոնց հոգին ու աչքերը լի են սուրբ խորհուրդի մը երկնումովը, որոնք վեր կը մագլցին միշտ դէպի դերբուկ գագաթը բարձր ճակատագրի մը, որոնք կը քաշեն մտախոհ, ակնկառոյց վեհագոյն նպատակի մը, իրենց աչքին առջեւ տեսնուող միշտ, գիշեր ու ցերեկ, կա՛մ նուիրական աշխատութեան մը ծրագիրը և կա՛մ անմահ սիրոյ մը արշալոյսը. անոնք՝ որոնց բարի է սիրտը, որոնց լեցուն են օրերը, զորս չէ թմբեցուցեր ոչնչութեան մը տարտամ ձայնադրոյթը, և որոնք թողնուած կ'ահաբեկին՝ կեանքի սանդղամատին վրայ վատանուն զինուորի մը տխուր յիշատակը թողու գաղափարէ՛ն միայն»:

* *

Ու պէտք չէ՛ մոռնալ թէ կեանքի կրօնին մէջ դիւցալնաբար ընթանալու պայմաններէն մին ալ է, կարգ մը բանեքա համար ինքզինքը շատ չենթարկել անցեալին ազդեցութեանը, ինչպէս նաև բոլորովին անձնատուր չըլլալ ապագայի յոսերուն: Կեանքի ո՛չ յաջողութիւնները պէտք է արեւցնեն և ո՛չ ձախողուածները արտաթափ ընեն մեզ:

Նոյնպէս է նաև ապագային համար. պէտք չէ շլանալ անոր ծիծաղկոտ խոստումներէն, որոնք շատ անգամ խաբեպատիր յոյսեր են միայն: Ներկայ կեանքն է ամէնէն իրականն ու վստահելին, հաստատուն կուռնն ու փորձաքար մարդուն բարոյական արժանաւորութիւններուն: Ու նա՛ միայն ունի իրաւունք սպասելու ապագայի դիւրութիւններուն, որ գիտցած է քաջութեամբ հանդուրժել ներկայի դժուարութիւններուն: Անցեալը առ առաւելն յուշարար մը. իսկ ապագան առաջնորդ մը միայն պէտք է ըլլան. կեանքի գործունէութեան ապարէզը՝ կորույ հրապարակը ներկան է միայն. ապագան ինքնին կը պատրաստուի արդէն, երբ ներկան իմաստութեամբ կ'աւարտի:

Մարդուն պարտականութիւնն է ուրեմն սիրել ներկան, պարկեշտութեամբ և բարութեամբ ապրուած այս աշխարհի կեանքը, համակերպութեամբ կրել անոր դժպիհի խստութիւնները, երբ անոնց բարձումը գերի վերոյ է մարդկային ձեռնհասութենէն, հզօր նկարագրի բոլոր ջանքերը ու քաջատես մտքի բոլոր լոյսերը կիրարկել, գիտակցօրէն՝ այսինքն արժանիքով ապրելու համար զայն:

* *

Ներկային յարգանքը հեռատես ու խոհական կ'ընէ մարդը, և կը վարժեցնէ զմեզ՝ արհամարհոտ չըլլալ կեանքի խոնարհութիւններուն հանդէպ, որոնք կըրնան ապագայ մեծութիւններու սկզբնաւորութիւնն ըլլալ, և որոնք դիւրաւ պիտի վրիպէին միայն անցեալին կապուած կամ միայն ապագայով նախագրաւուած միտքերէն: «Աստուծոյ իմաստութիւնը ինչ

փառքեր ծածկած է արդեօք սա խեղճուկ զրգլիակներուն ներքեւ», կ'ըսէր քարոզիչ մը, անցնելով աղքատ թաղէ մը, ուր պղտիկներ կը զրօսնուին:

Բայց խոնարհ կեանքերու նկատմամբ տածուած սէրն ու յարգանքը աւելի օգտակար և արդիւնաւոր են մանաւանդ անոր համար որ մեր մէջ վառ կը պանն պատուոյ զգացումը՝ նո՛յն իսկ մեր անձին վերաբերութեամբ: Տկարամտութիւն չէ անշուշտ որ և է մարդու համար՝ խորհիլ երբեմն թէ ի՛նքն ալ կրնայ լաւագոյն ծառայութեան մը համար օժտուած ըլլալ: Ընդհակառակն, իր կոչումն զգալու, իր անձին արժանաւորութեան մասին գաղափար ունենալու համար լաւագոյն պայման է ան, որ ինքնին զրեթէ համագոր է աշարջութեան և խոհականութեան:

* *

Այս ոգիով, մաքի ու սրտի այսպիսի տրամադրութիւններով ապրուած կեանքը միայն կրնայ ըլլալ տեւական և աւելի երկարակեաց՝ քան նոյն իսկ ապրող ենթական: Ժամանակը կ'անցնի, տարիներն ու օրերը կը հոլովին, բայց լաւ ապրուած կեանքին յիշատակը կը մնայ ընդ երկար, իրեն հետ անմահացնելով անուններ և աղբեցութիւններ:

ԹՈՐԳՈՍ ԵՊԻՍԿՍՒՍԷԲՈՍԿՈՅ

ՄՈՌՅՈՒԱԾ ԷՋԵՐ

Ընթերցողները հաճոյով եւ օգտի պիտի կարդան մեր քանաստեղծ Պատիարիկն՝ Ամեն. Դուռնան Սրբազանի հմայիչ մեկ գրութիւնը՝ Ս. Ծննդեան եւ Աստուծայայտութեան թեմին առթիւ. —

Մ Ն Ն Գ Ե Ա Ն Ա Ռ Փ Ի Ի

«Ո՛ւր է որ ծնաւ...»

Աւետարանի մոգերը արեւելքի երկար ճամբորդութենէ մը յոգնած՝ անհատնում ասպարէզներու փոշիներով թաթաղուն՝

հազիւ Հրէաստանի հողերուն վրայ կը դընեն իրենց ոտքերը, և ահա՛ կը կորսնցնեն երկնային անձանօթ լոյսին երեսը՝ որ առաջնորդ մը եղած էր հեռաւոր սահմաններէ բերելով զիրենք դէպի ուրիշ անձանօթ մը՝ զոր կը փնտռէին: «Ո՛ւր է...» հիմա կը հարցնեն իրենց հանդիպողներուն. «Խաւարի մէջ նստող ժողովուրդի մը» գիշերուան ճրագներուն կ'ուզուէր այդ սրտառուչ հարցը:

Լոյսին վայրկեանական տնհետացումէն շուարած՝ պահ մը մոգերը պէտք կը զգան անո՛նց օգնութեանը՝ որոնք հաւատք մը ունենալ կը կարծէին Գիրքերու գիտութեան բանալին իրենց ափին մէջ չփելով. «Գրուած է, կ'ըսէին, Մարգարէին ձեռքով. «Բեթլեհեմի մէջ պիտի ծնի»: Սակայն զրքին ճշմարտութեանը վկայելու եռանդով՝ ո՛չ մէկ քահանայապետ կամ դպիր չչարժեցաւ իր տեղէն՝ երթալ տեսնելու համար «Խարայէլի ժողովուրդը հովուելու սահմանուած մանուկը...» ու մոգերն էին դարձեալ որ իրենց ճամբան շարունակեցին՝ վերստին հանդիպելով իրենց լոյսին: Ահ, որչափ աւելի կենդանի է ճառագայթի մը շինած հաւատքը քան մագաղթի մը շինածը. Գրիկն ջնորհիւ նորէն դառնալ իր ուրախարար լոյսին. երկրորդն իր ամբար աւած գիտութեամբը դալկացած՝ մուխ վարանուիներու մէջ կը թաղուի:

Թո՛ղ մտնեն ուրեմն երջանիկները՝ իրենց երկրպագութիւնը մատուցանելու, իրենց դանձերը բանալու. ու անոնք որ ապաժաման հետեւողներն են նոյն ճամբուն՝ ու չունին իրենց գլխուն վերեւ նըշուող լոյսի մը տեւական առաջնորդութիւնը՝ ստիպուած են հարցնելու «Ո՛ւր է նա»:

«Հո՛ս է» պիտի պատասխանէ մեզի եկեղեցիին պաշտօնեան՝ որ Գիրքերը կարդացած ըլլալու մեծ վատահոլութիւնն ունի ու ցոյց պիտի տայ մեզի՝ լռութենէն ու մութէն անդին՝ տեղ մը, երկնքի նմանութեամբ գեղազարդուած կամարի մը տակ, ուր լոյսեր կը պսպլան ու նուագներ կը հնչեն. — Չէք տեսներ. այս ջահերը չեն

յիշեցներ ձեզի մոգերուն առաջնորդող լոյսը . չէ՞ք լսեր, հրեշտակային ձայներ կրթրթռան «բարձունքի փառքը» գեղգեղելու համար . չէ՞ք զգար անուշակ հոտը այրող կնդրուկներուն :— Միթէ ասոնք բաւակա՞ն են մօտ տանելու զմեզ Յիսուսին, պիտի մրմնջէին հաւատքի խորութեանը մէջ յառող հոգիները . եթէ մեր ծխացող լոյսերուն մէջ դիւրին ըլլար գտնել զինքը՝ ալ ինչո՞ւ նայէինք երկնքի լոյսերուն . եթէ մեր կերկերացող ձայներուն մէջ դիւրին ըլլար լսել զինքը՝ ալ ինչո՞ւ ականջ դռնէինք խղճին լուսթիւնը ներդաշնակող զմայլումներուն . ու եթէ մեր կնդրուկներով դիւրին ըլլար խնկել զինքը՝ ալ ինչո՞ւ ցանկայինք երկնաւոր բուրումնութեան : «Ո՛ւր է նա» :— Բայց ահաւասիկ, հո՛ս, ձեր աչքին առջեւ կը պատկերանայ մտուն ու խանձարուրը . չէ՞ք նշմարեր տնոր մէջ հանգչող հրաշալի Մանուկը, Կոյս Մայրը . . .

Դիրքերը ու դրքին մարդը մինչեւ հոս կրնան տանիլ զմեզ . . . աւելի՛ հեռուն երթալու և այս տեսարանէն անդին փայլատակող ճշմարտութիւնը ողջունելու համար՝ պէ՛տք ունինք Հաւատքին, Մոգերէն ժառանգուած այն լոյսին որ գիտէ թէ ո՛ւր վերջապէս պիտի արձակէ իր մաքուր ճաճանչը :

Դիւրին է մտածել թէ ո՛րքան մեծ եղաւ պատրանքը Մոգերուն, երբ կանգ առին աղտեղի իջեւանէ մը տեւիլ անշուք յարկի մը առջեւ, անշուշտ իրենց երեւակայածէն չա՛տ տարբեր իրողութեան մը գիմաց գտնուելով : Իրենք ազնուականներ էին ու կը մտնէին տեղ մը՝ ուր ոչ մէկ նշան կար պերճանքի . անպատասպար ու աղքատ բնտանիքի մը մօտն էին, և ո՛չ թէ «փափուկ հանդերձներ հագնողներու» շրջանակին մէջ : Բայց ի՞նչ փոյթ . հոն կը տանէր լոյսը զիրենք . հա՛րկ էր ուրեմն երկրպագել այդ անլոյս յատակին վրայ . ու միթէ այս չէ՞ ճշմարիտ երկրպագութիւնը՝ երբ հոգին վերէն չողացող լոյսին ու վարը սողացող մութին մէջտեղ կը շարժագրէ իր պաշտումի խորհրդաւոր վայրկեանը : Մոգերու այդ պաշտումին

մէջ՝ էմմանուէլի մերկութիւնը ամէնէն վեհաշուք ծածկոյթն ունէր իր վրայ, սրբութեան մերկութիւնն էր այն . մոայլ այն խորշը՝ որուն մէջ կը հանգչէր նա՝ խաւարին երկունքը չունէր, վասնզի մեծ խորհուրդին խորշն էր այն . ու կարկատուն այն խանձարուրը՝ որուն պլլուած էին իր անդամները՝ օրրանն էր նոր մարդկութեան մը որ պիտի վերածնէր :— Իսկ ի՞նչ պիտի խորհէր արդեօք Մարգարէներու հաւատարիմ թարգման : հանդիսացող դպիրը՝ եթէ իր Գիրքերուն հետ հոն եկած ըլլար այդ ամէնը դիտելու : Ապահովաբար պիտի զննէր նախ Մանուկ Յիսուսին երկու ուսերը՝ տեսնելու համար թէ կա՞ր անոնց վրայ երկնային իշխանութեան մը կնիքը, պիտի չօշափէր անոր աղածրի բազուկները՝ Եսայիի նկարագրած զօրութեան բազուկին հետ համեմատելու համար զանոնք, ու յետոյ ծաղրանքով մը պիտի մրթմրէր «Հզօր մանուկ, հայր հանդերձելոյ աշխարհին» : Իրեն համար Յեսուէի արմատէն բողբոջած այդ տոգոյն ծաղիկը չէր կրնար զարդն ըլլալ Դաւիթի բնակարանին :— Մէկդի՛, հնար չէ՛, քեզի՛ միայն Գիրքովդ իմանալ թէ Աստուծոյ հոգին օծած է զանի, իմաստութեան և զօրութեան հոգին, հանճարի և դիտութեան հոգին (Եսայի . ԺԱ . 4) : Ո՛չ մէկը՝ որ կը մօտենայ Յիսուսին և չունի իր Հաւատքին պայծառութեանը մէջ փայլող լոյս մը, պիտի չկրնայ հասկնալ «այն մեծ և սքանչելի խորհուրդը որ յայսմ առաւ յայսմեցաւ» : Եւ եթէ նոյն այն լոյսը՝ որ բացիւփիկ խաղերուն քմայքովը՝ այս անգամ ալ ցոյց տայ քեզի մուտքը ո՛չ թէ ջահաւորեալ տաճարի մը՝ այլ խարխուլ տնակի մը՝ որ գետնի չափ ցած ըլլայ, ուր ճրագը մարած ըլլայ, ուր մանուկը մայր չունենայ, պիտի չխռովիս երբեք, վասն զի պիտի զգաս թէ ճշմարիտ երկրպագութեան մտուրէն հեռու չես, թէ մօտն ես ընծաներու վեհ մատուցարանին, բարձրեալն Աստուծոյ փառքին ու ինկած մարդուն հաճութեան գրկախառնումին մէջ, ու ալ պիտի չհարցնես թէ «ո՛ւր է նա» :

ԵԼԻՇԷ ԱՐՔԵՊ. ԳՈՒՐԵԱՆ

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Ուշագիտ աչքերէ չի վրիպիր բնաւ բարոյական այն տեսակ մը անկումը, որուն ենթարկուած ենք: Այդ անկումը ընդ փոյթ տեսնելու համար՝ աւելորդ ալ է այնքան ուշագործիւն, որովհետեւ ընթացքներն ու երեւոյթներն արդէն պերճախօս են ինքնին:

Մեր անկեալ ու խոտոր ընթացքին յաջորդած է ամենածանր խոտորնակութիւն մը, այն է սկզբունքի չգոյութիւնը: Սոփեստականութիւնը իր քանդումները յառաջացուցած է, խղճի չէնքին սպառնալու ատիճան: Ի մի բան՝ բարոյական ապականութիւնը կատարեալ է: Չարիքը չարիք չի նկատուիր այսօր, և ոչ ալ բարիքը բարիք: Կամք, խիղճ և պատասխանատուութիւն հիւանդութեանց կարգը դատուած են այլեւս: Բարոյական այս ընդհանուր անկումին ընական ու անխուսափելի հետեւանքն եղող անարդարութիւնը անհունապէս ալետալի հանգամանք մը ստացած է: Այսօր արդար ու անկեղծ վերաբերում չունինք իրարու հանդէպ, ու այս՝ զրեթէ ամենուրեք և ամէն պարագայի մէջ առանց բացառութեան: Ասիկա սպառնացող չարիք մըն է ուրկէ աւելի ծանր չարիքներ կրնան ծնիլ: Անարդարութիւնը բազմաձին մայր մըն է, մայր մը որ իր աւերները գործելէ վերջ արիւնով ու արցունքով կ'ուզէ ողորդել զանոնք:

Արդարեւ աւաղելի կացութիւն, իրերու այս ախուր կացութեան գիտակցութիւնն ունեցող ամէն անհատի միակ պարտականութիւնն է հակադրեցութիւն, Ինչպէս սակայն: Մեծ հարցում արդարեւ: Ըստ իս միակ միջոց մը կայ, այն է հակադրեցութեան և propagandeի սկսիլ, գործակից ունենալով անվճատ համբերութիւնը, և այն իմաստութիւնը որ գիտէ գոհանալ համեստ սկզբնաւորութիւններէ: Այս գիտակից ընթացքով մենք պիտի կատարենք խաղաղարարութեան փրկարար գործը, և արդարութեան լոյսն ու յոյսը պիտի ծնցնենք անոնց մէջ, որոնք անարդարութիւնը և անոր պօգալի հետեւանքները փառք կը նկատեն իրենց:

Եւ ի՞նչ է արդէն ճշմարտապէս Բրիտոսի աշակերտողին պաշտօնն ու պարտականութիւնը, եթէ ոչ միջնորդ և խաղաղարար: Այս կրկնակ պաշտօնը ի գլուխ հանելու համար, պէտք է քննենք նախ այն պայմանները որոնք պիտի հետաքննեն գործը: Նախ պէտք է ըսել թէ Արդարութիւնը մէկ օրուան ծնունդ չէ: Անիկա երկարատե թխսաւորումի (incubation) մը արդիւնք է ինքնին: Այսօր մեր սա ընդհանուր անկումին մէջ խաղաղարար և վերականգնիչ ոյժ մը ըլլալու համար, պէտք է լաւ քննել իրերն ու երեւոյթները, և փորձառութիւն ունենալ: Մէկ խօսքով ու է մէկը քննադատելու և զայն բարոյականութեան ընտանեցնելու համար, պէտք է ինքզինքնիս անոր տեղը դնենք և անոր մտային ու բարոյական կարողութեան չափանիշին թափանցենք: Պայմաններ են տառնք, որոնք կ'իրականանան ճշմարիտ քրիստոնէին համար այն հոգեբանական ու տաճնապալից ընթացքին մէջ, որ դարձ կամ վերածնունդ կը կոչուի: Ահա այս երկու ակերէն կը բղխի կենդանի ջուրը, որով կ'ուզենք ողորդել այն տամկացած երկիրները, ուր կը ծաղկին ու կը թարչամին, կը ծնին ու կը մեռնին Արդարութեան Աստուածային ծաղիկները:

Ի՞նչ է վերածնունդը:

Խաղաղարար ու վերածնունդն Բրիտոս կ'ըսէ. — Երկնից արքայութիւնը մտնելու համար պէտք է վերադառնալ ծնիլ, ոյսինքն թէ մարդ պէտք է հրաժարի կեանքի բոլոր ապականութիւններէն, լսէ իւր խղճի ձայնը, և ջանայ իրրեւ մարդ ապրիլ, բառին պարզ և ամենազեղեցիկ առումով: Վերադառնալ մարդը Աւետարանի ազդեցութեան և անկէ ճառագայթող լոյսին շնորհիւ կ'զգայ իր երբեմնի թափառումը, իր յուսահատութիւնները, տարտամ ու տատամստ վիճակը, կը տեսնէ թէ ամեն չարչարանք ու տանջանք, իսնդ ու ծիծաղ, երջանկութիւն ու դժբաղդութիւն, վերջապէս ամեն ինչ կ'անհետանան անհուն ոչնչութեան մէջ: Եւ այս՝ ապրիլ չէ այլ մահ: Վերածնունդին համար բոլորովին հմայիչ ու դիւրիչ գոյներով կը ներկայանայ կեանքը իր բոլոր

դիմայեղուններով և իր ճակատագրին խորունկիս որհրդաւորութիւններուն մէջէն յարկընչմարէ տրդարութիւնը, իբրեւ յարացոյց իր կեանքին և իբրեւ ուղեցոյցը իր գործունէութեան :

Վերածնողին ամբողջ էութիւնը, անոր կեանքը, սկիզբն ու վախճանը անդոհալից հակադիւցնութեան մը բովէն կ'անցնի: Անոր խղճին խորը, գերմարդկային պայքար մը կը մղուի, հակառակ ուժերու սոսկալի հանդիպում մը վեր ի վայր կը շրջէ անոր ներքին աշխարհը, և հուսկ ապա հոն կը ցուցնէ Արդարութեան արեգակին ճառագայթները :

Այդ բարոյականութեան ծնիչ հակադիւցնութիւններուն և իրերամերժ ոյժերու հանդիպումներու ետին Աւետարանի Գրիտոսը կը նշմարուի: Այդ կատարելապէս բարի, կորովի ու արիւնքակին ներկայութեան վերստին ծնողը կը զգայ ճշմարիտ կեանքին գեղեցկութիւնը և անկէ հեռանալուն վիշտը: Անիկա որոշակի կը տեսնէ այն գաղտնի խղճնդոտները, որոնք արգելք կը հանդիսանային իր բարոյական ու մտային զարգացման, և կ'առաջնորդէին զինքը դէպի անարդարութիւն, անբարոյականութիւն և սոփեասականութիւն: Յիսուսի աստուածային դէմքէն արդարութեան ցօղին ցօղաւորումը կը զգայ իր մէջ, անարդարութեան չղթաներէն չղթսպղեթ՝ ազատ ու ազատին եղբայր կը նկատէ ինքզինքը: Ահա՛ վերածնութեան այս բովէն պէտք է անցնինք և անցնին նաեւ անոնք, որոնք սոսոր բարոյականութեան և արդարութեան ընդհանուր անկումի մը տխրանքները ցոյց կուտան իրենց վրայ:

Ո՛հ, խղճի, գիտակցութեան այդ հրաբորբոք բովէն անցնողը միայն կրնայ գիտնալ թէ, ո՞րքան արցունքներ, ո՞րքան վիշտեր, ո՞րքան սրտմաշութեանքներ, և ի՞նչ անպատում յուսահատութիւններ կը պարփակեն սա՛ բառերը մարդը խեղճ մեղաւոր մըն է, որ արդարութեան կը տեսնուի: Այո՛, մեծ է մեր բարոյական անկումը, իսկ անոնք որ մեծութեան այդ ահեղ գիտակցութիւնը ունին, համբերատար ոգիով մը պէտք է կանգնին իրենց խաղաղարար ու վերականգնիչ գետնին վրայ:

Մարդիկ ընդհանրապէս և մասնաւորապէս անկեանքերը, բարոյականէ զատ, մտային ու ֆիզիքական տեսակէտով ալ պէտք ունին արդարութեան առաջնորդող և վերականգնող ոյժերու:

Ստոյգ է որ մարդը անգիտակից տարր մը չէ, ինչպէս քարը, բոյսը և կենդանին, ո՛չ ալ ամենազէտ ու ամենաթափանց: Անհունութեան խորէն ձայն մը կը գոչէ իրեն. — Ելուր: Եւ կ'երթայ: Իր առջեւ կը գտնուի լուսաճաճանչ այգը և ետին գիշերը ահաւոր: Անձանօթներէ շրջապատուած, և ճանչնալու տենչէն բռնուած, ամէն քայլափոխի կարծես սա բառերը կը մրթմրթայ: Մարդը տեսնուի, որ տեսնուի անհոգութեան պիտի:

Փոշի՛ գաւակ. — Մարդը կ'անցնի կ'երթայ և կ'զգայ իր աներեւութանալը: Ո՛չ մէկ բան այնքան ճշմարիտ է որքան իր դիւրարկութիւնը: Սակայն հակառակ իր այս անցաւորութեան, նա կ'ընդգրկէ դարերը յիշատակներով և նախազգացումով: Նա յաճախ կ'ընդնշմարէ յաւիտենականութիւնը անցնող վայրկեաններուն մէջ: Եւ այս էակը որ արդէն իր շրթներուն վրայ կը կրէ անմահութեան բաժակը, ինքն է դարձեալ որ ցմրուր կը քամէ մահուան դառն բաժակը, վաճառի գիտէ թէ կը մեռնի. — Մարդը անցորդ մըն է, որ կը փնտռէ այն անհնաւ բաները, որոնք տեսնուի են:

Մարդը միւս անգամ էականութեան պէս ամէն ինչ իւրացնելու բնական յատկութիւն մը ունի: Նախ կը մտածէ իր անձը, և անոր շուրջը կ'ուզէ խմբել ո՛չ միայն միւս անձերը, այլ և անոնց պատիւն ու շնոր: Այս յատկութիւնը հետզհետէ չափազանցութեան տանելով, կ'ըլլայ անձնասէր մը: Եւ ահա իրեն ակառակորդ ու մրցորդ կը նկատէ ուրիշները: Ահա տխուր երեւոյթ մըն ալ, որ տիրապետող ոյժը հանդիսացած է այսօր: Բայց այդպիսի անձնասէրներուն պէտք է մեղմօրէն և խաղաղասիրաբար զգացնել թէ մարդը ընկերական է և հետեւաբար պէտք ունի սիրելու, և իբրեւ անդամ անկեղծ սիրով մը զօգաւորուելու ընկերութեան ամբողջութեան հետ: Պէտք է հասկցնել թէ իրենց ուրախութիւնը և դժ-

բախտութեանը պատիւն ու շահը հաւասարապէս կը վերաբերին ընկերութեան ամբողջութեան:

Երբ այս ճշմարտութիւնը կարելի ըլլայ հասկցնել անոնց, ահա այն ատեն կը սկսի վերածնունդը, և անոր առթած հոգեկան ներքին կակիծները, այն ատեն կը սկսի պայքարը, որուն ամբողջ տեւողութեանը մէջ տողուած կը տեսնենք սա՛րսուկը, — Մարդը անձնասէր մըն է, և պէտք ունի սիրելու:

Այս է ահա արդի եղկելի վիճակը անոնց, որոնք բարոյական կատարեալ անկումի մը տիպարը հանդիսանալու դժբախտութիւնը ունին: Բաւական է միայն զգացընել անոնց՝ իրենց վիճակը, իբրեւ անխուսապելի հետեւանքը մարդկային հոգային կազմուածքին, և ահա անոնք վերածնունդութեան պիտի տեսնան, երջանկութիւն պիտի երազեն, և սրտի ու խղճի խաղաղութիւնը պիտի փնտռեն: Կասկածը և ստուգութեան տենչը, մեղքը և սրբութեան պէտքը, կեանքին ծարաւը և անոր ոչնչութեան զգացումը, ասոնք ամէնքը բարոյականութեան և արդարութեան ծնունդը պիտի փութացնեն: Միջնորդութեան և խաղաղութեան դերը ստանձնողներուն համար բաւական է միայն յոյսի այս աւետումը, և վստահ թող ըլլան թէ այդ իրերուն հոգիները, իրենց բարոյական, հոգեկան, մտային ու ֆիզիքական խաբխափումներուն մէջ պիտի հանդիպին խաղաղարար և միջնորդ Բրիտտանին, որ իր ուսերուն վրայ պիտի առնէ իր կորուսեալ ոչխարները, ըսելով. «Որդեակներս, ձեր մեղքերը ներուած են, մի վախճաք այլ միայն հաւատացէք»:

Եւ ես պիտի կրկնեմ դարձեալ այսօր բարոյականութեան — իր այլազան իմաստով — անկեալ շրջան մըն է որ կը բոլորենք բայց պէտք չէ տարակուսիլ արդարութեան զսլութեան և տեւականութեան մասին: Մարդիկ ի բնէ սխալական են, այդ սխալականութեան հետեւանքն է այսօրուան խոտոր և հակաքրիստոնէական ընթացքը, որուն կը հետեւին շատեր:

Ճշմարիտ քրիստոնեաները, բարոյական անհատները և արդարութիւնը սիրողները,

այս խառնաշփոթ վիճակին մէջ խաղաղասիրական և ճշմարիտ առաքելութեան մեծ ու նուիրական պաշտօնն ու պարտականութիւնը ունին կատարելիք: Այդ պարսկականութեան շիտիկ գործարարութեան է որ ծրնունդ պիտի առնէ արդարութիւնը, և պիտի ազատէ անոնք որոնք կը խառնաշփոթ սասանային:

Այդ առաքելութեան գործը ստանձնողներուն համար համբերութիւնն ու յատուկութիւնն է էականը: Այս կերպով անոնք պիտի նմանին ա՛յն քաջ ապստոսին, որուն մեծ հրամանատարը արիւնալից պատերազմի մը մէջ վիրաւոր, ցուցամատը իր արիւնի ճապարկներուն մէջ թաթխած դէպի քաջ ապստոս ցցած կը կոչէր. «Ահա մեզի անհրաժեշտ մարդը, մարդ մը որ զրահապատ է, և զբայրասէր սիրտ կը կրէ և անվնէր յառաջ կ'ընթանայ»:

Օ՛հ, յառաջ ուրեմն, ո՞վ խաղաղասէր և եղբայրասէր հոգիներ, դժււք որ արդարութեան ծնունդը փութացնելու, անկեալները վերականգնելու, և կորուսեալ ոչխարները դէպի երկնաւոր հօր փարախը առաջնորդելու պաշտօնը ունիք: Հեշտ չէ ձեր պաշտօնը. դուք պաշարուած էք ամէն երեւելի և աներեւոյթ փորձանքներէ, որոնք միշտ կը սպառնան ձեզի: Սակայն դուք իբրեւ արդարութեան ախոյեան, դուք, իբրեւ ճշմարտութեան պատգամաւոր, դուք վերջապէս դուք իբրեւ պաշտպան իրաւունքի, պէտք է առաջնորդ կոխէք ամէն խոչընդոտ, և եթէ երբեք ձեր յառաջընթացումին, ձեր մեծ պաշտօնին մէջ մահը փակէ ձեր աչքերը — ինչպէս ձեր միւս ընկերներուն — արդի և ապագայ սերունդները պիտի պահեն ձեր յիշատակը նուիրական, և ի խորոց սրտէ պիտի երգեն սա յաւիտենական երգը, «Երանի անոնց որոնք արդարութեան համար կը հալածուին և կը մահանան»:

Օ՛հ ուրեմն յառաջ:

ՍՈՒՐԷՆ ՎՐԴ. ԳԱԼԵՄԵԱՆ

Սկիւտար

ՆՈՐ ՏԱՐԻՈՑ ԱՌԹԻԻ

«Կարճեալ է ժամանակը».

Այն վայրկեանին՝ յորում նոր տարիի սեմին վրայ ոտք կը կոխենք, քնադդաբար աչքերնիս ետեւնիս կը նետենք անգամ մը, և ակնարկ մըն ալ դէպ առաջ կը ձգենք: Կը յիշենք այն ճամբաները որոնց վրայէն անցած ու հասած ենք այսօրուան. կը հոր-ցընենք մենք մեզի թէ՛ ի՞նչ նոր ճամբաներ պիտի բացուին մեր առջեւ: Երանի այն մարդուն որ անցեալին մէջ կրցած է ճանչնալ ճամբաները, գիտցած է պաշտել Աստուծոյ մատակարարութիւնները, և որ գիտէ թէ՛ դարձեալ Աստուած է որ պիտի խնամէ զինքը և պիտի առաջնորդէ ապագային ալ: Այն ատեն յիշատակներէն ամէնէն թարմը կ'ըլլայ մեզի համար ժամանակին սղութիւնը, օրերուն, ժամերուն և վայրկեաններուն շուտով անցնիլը՝ և մեր կեանքին նոյն և միշտ նոյն մնալը: Տարիները շատ շուտ կը սահին և կ'անցնին միշտ աւելի արագ: Ու այդ տարիները մարդկային մեծ սմբողջէն շատ հունձքեր կ'ընեն, կը քաղեն հասուն հասկերը: Ժամանակը կարճ է. անգամ մը ակնարկ մը ձգել անցեալին վրայ, պիտի համոզէ զմեզ. մահը միշտ աչքերնուս առջեւ է, և կարծես թախծոտ չեղտով մը կ'ըսէ. «Պատրաստ կեցիր միշտ, ժամանակը կարճ է»:

Նոր տարիին ժպտող արեւը կեանքի խնդիրով կ'ուռգէ զմեզ. կեանքի ու գոյութեան կռիւին արի՛ մշակներն ու մարտիկները ըլլալ մտադրած ենք, բայց ի՞նչ կը պահէ մեր ներկայ թեւակոխած տարինիս, Աստուած գիտէ, և մանաւանդ մինչև հիմակ ապրած կեանքերնիս:

Յաճախ հանդիպած էք հարկաւ ձեր կեանքին մէջ այնպիսի մարդերու, որոնք մինչև իրենց կեանքին վերջին հանգրուանը, միայն ու միմիայն զբաղած են ու խօսած են աշխարհի հաճոյքով, և զուարճութիւններու մասին: Ոչ մէկ ատեն այնպիսիները մտքերնէն անցուցած են տերեւաթափը աշնան և խորունկ քունը ձմրան, որոնք ծե-

րութիւնն ու մահը կը յատկանշեն, երբ արդէն ծաղիկի եղանակը անցած է, և դուք ինքնիրեն ըսած էք. «Այսքան թեթեւ և այսքան մօտ ըլլալ յաւիտենականութեան»: Կեանքը լուրջ է ամէն մարդու համար, իր նպատակով և իր կարճութեամբը մանաւանդ. բայց յաճախ ի՞նչի կը գործածուի ան: Շատեր կեանքերնին կ'անցընեն միայն ճանկերնին բանալով ու մուրալով. ուրիշներ հաճոյքի մէջ կը յղիւնան, և ատենցմէ մեծագոյն մասն ալ միայն ու միմիայն այսօրուան բաներով, և ոչ այլ ինչով կը զբաղի. ներկայի պէտքերն ու պահանջները, ներկային վայելքն ու հաճոյքը բուռն կ'ունեն անոր համար, բաներ՝ որոնք վաղը կ'ոչնչանան, ու... վաղը... թերեւս դուք ալ չարթննաք ձեր հաճոյքներուն մէջ թմրած և յաւիտենական քունը գրկած: Ահ, որչափ մարդիկներ կան, որոնք այս աշխարհէն կ'անցնին միայն իրենց գոյութիւնը ոչինչով և սին հաճոյքներով լեցնելու համար, և ճիշտի քիչ են անոնք՝ որոնք կը յիշեն թէ՛ հաշիւ մը ունին տալու, և թէ միակ անհրաժեշտ բան մը կայ: Կը զարմանաք անշուշտ Բաղտասարի մասին եղած զրոյցը մտիկ ընելով, մինչդեռ խորհրդաւոր ձեռք մը կը գրէր սա խորհրդաւոր խօսքերը՝ պատին վրայ, «Ամեն, քեկեղ, փառհս», այսինքն «Աստուած չափեց քու թաղաւորութիւնդ և պակաս գտաւ, և այդ պատճառով պիտի բաժնուի անիկա» ու սակայն Բաղտասար նման էր այն մարդերուն ու կիներուն, որոնք մեր մէջ քիչ չեն թուով:

«Առաջ, առաջ գնա՛, ո՛վ մարդ, գնա՛ այն ճամբէն, ուրկէ զքեզ կ'առաջնորդէ քու սիրտդ, և ինչպէս կը տեսնեն քու աչքերդ բայց գիտցիր թէ այս ամէնուն համար դուն հաշիւ պիտի տաս, և յիշէ թէ ժամանակը կարճ է»:

Սիրելի եղբայրներ, երեսակայեցէք մարդ մը որ միայն բարիքներ ու հաճոյքներ վայելիլու համար տարի, բարիքներ ու հաճոյքներ, զորս աշխարհ կը պատրաստէ ամէն հեշտասէրի համար: Այն գերագոյն վայրկեանին, սակայն, ուր ամէն բան կ'անհետի, հաճոյքները կը ցնդին, վայելքները կ'ա-

նէանան, և երբ մարդ ինքզինքը դիմացը կը տեսնէ արդար ու օրինաւոր դատաւորի մը, այո՛, այն ատեն է որ կը զգայ և կ'ըմբռնէ Սողոմոնի վսեմ խօսքը՝ «Ունայնութիւն ունայնութեանց»։ այս կեանքին բոլոր հաճոյքները զուր են, ժամանակաւոր ու անցաւոր։

Այն ամէն մարդոց համար, որոնք կեանքին լուրջ կողմը կը մոռնան, տարիին վերջին օրն ու առաջին օրը, երբ հաշիւները մաքրութիւն այլեւս, որչա՛փ սուր կերպով զգալի կ'ըլլայ «ժամանակը կարճ է» բացատրութիւնը առաքեալին։ Կեանքը յաճախ տխուր կը թուի մեզի, եթէ մենք փորձը անձամբ առած չենք։ ունինք բարեկամներ ու մերձաւորներ, որոնք առած են զայն։ անոնցմէ շատեր չարաչար կը տանջուին, ամենուրեք կը լսենք աղիողորմ ճիչերը սովածներու, և այդ տեսարանը սիրտ բզբտելու իր հանգամանքովը շատ ալ հրահանգիչ է։ Չէ՞ մի որ ամէնէն զուարթ և ամէնէն ուրախ վայրկեանիդ, տրամութեան քող մը կրնայ մթագնել սիրտիդ ալքերը։ ամէնէն աւելի բախտաւոր նկատուած մէկը, չէ՞ մի որ մէկ վայրկեանէն միւսը ամէնէն դժբախտը կրնայ ըլլալ, ու ասի իրականութիւն է... Երանի անոնց, որոնք գիտեն համակրելի ըլլալ, գիտեն լալ ու լացնել, խնդալ ու խնդացնել, և որոնք գիտեն մանաւանդ լալ լացողին հետ և խնդալ խնդացողին հետ։ Շատեր այնքան ետսէր են որ, միայն իրենց անձին հանդիպած վտանգի մը առջեւ կը համակին տխրութեամբ... Ու յաճախ ալ խաչը ծանր է, շատ ծանր, անոնց համար որոնք զայն կը տեսնեն։ Տեսէք սա հիւանդը, որուն ցաւը անբխկելի է, և որուն վիշտերը շատ դժուար է ամոքել։ աս կլինը մայր մըն է, որ յամբօրէն հիւծելը կը տեսնէ իր աչքին առջեւ իր սրտահատոր էակին։ սա այրին որ կը հալի ու կը մաշի՝ իր ոյժերէն վեր աշխատութեան մը ձեռնարկելով, այսինքն՝ իր զաւակներուն կտոր մը հաց տանելու համար։ ու աւելի սիրտ բզբտող վիշտեր կան տակաւին աշխարհի վրայ... և այդ ամէն կուրծքերէն դուրս կը պոռթկան սա հառաչանք-

ները. — «Ու մինչեւ ե՞րբ... ո՛ւր ես, ո՛վ մահ»։

Սիրելի եղբայրներ, դուք որ վիշտի մէջ էք ու ցաւոց և տրամութեան ձեռք գերի ինկած, գիտցած եղէք թէ անոնք գերեզմանին եզերքը կը դադրին միայն և մեղքերուն անմիջական հետեւանքն են, վասն զի մենք բնա՛ւ չենք ուզած յիշել՝ թէ՛ «ժամանակը կարճ է» բարիք գործելու համար, և երկայն՝ չարիք ու մեղք գործելու համար։

Ու այսօր, նոր տարիի սեմին վրայ այս տխուր վերջիչումները կրնան զմեզ դարձի բերել, մեր կեանքի ուղղութեան քանոն ըլլալ։ ապա թէ ոչ, ինչպէս սովորական կեանքի մէջ, հաշուեյարդարութեան պակասութիւնը զեղծումներու դուռ պիտի բանայ մեր կեանքի կրօնական կողմին վրայ ալ։ կը մտածենք այսօր թէ ներկայ նոր տարիին մէջ ի՞նչպէս պիտի ապրինք, ի՞նչ ճամբայ պիտի բռնենք, և Աստուած ո՞ր ուղղութեամբ պիտի առաջնորդէ զմեզ։ Աստուած միայն գիտէ։ Այս վրասահութիւնը զմեզ կը կապէ սերտ կերպով մեր տիրոջ հետ, մեր Աստուծոյն հետ։ Ու անիկա նախապէս չպիտի ըսէ՝ ապագան. այն որ երէկ ու անցեալ օր մեր առջեւ բացաւ ճամբայ մը, վաղն ու միւս օրն ալ կը բանայ ապահովաբար, ասիկա բաւական չէ՞ մեզի համար։ «Յոյս իմ ես դու Տէր», «սպասեցին աչք իմ փրկութեան քու՛մ տէր», կ'ըսէր սաղմոսերգուն։ ասիկա բաւական չէ՞ մեր հանգիստին համար։ Աստուած մեզի պիտի առաջնորդէ այս ներկայ անապատին մէջ ի սիւն ամպոյ, պիտի առաջնորդէ նոր տարիին ամբողջ տեւողութեան միջոցին ու... յաւիտեան ալ։ Ահա՛, սիրելի եղբայրներ, միայն թէ կամք ունենանք անորմէ առաջնորդուելու։ Մենք տակաւին Բանաստեղծ երկիրը չենք հասած, երկար ճամբայ մը ունինք կտրելիք, տակաւին կը քալենք, ու մեր ճամբան միշտ Իսրայէլի որդւոց ճամբուն կը նմանի։ անապատի աւազները կը ծանրացնեն մեր քայլերը։ անտարակոյս մեր ճամբորդութիւնը ոչ միայն իր յոգնութիւնները, այլ նաև իր անձկութեան ժամերը

պիտի ունենայ. մենք ալ մեղանշած ու ապստամբած ենք մեր առաջնորդին Մովսէսին դէմ: Թերեւս տարուան այս առաջին օրը արդէն մենէ մէկ քանիները հակառակութեան ջուրին վրայ Աստուծոյ կը փորձուին, և շատեր սխտորի ու լորտաբազիի ակորթակով կը պատժուին. և անապատին աւազին վրայ կը փռուին. ետեւներէն ճնշում մը կայ դէպ ի առաջ երթալու, բայց՝ առջեւին ճամբայ չկայ:

Եւ թերեւս ներկայ տարին դժխեմ պատահարներու շղթայաւորում մը ըլլայ, մեզի ու մեր սիրելիներուն համար, մեր դրացիներուն, մեր համայնքին ու մեր Եկեղեցիին համար, քանի որ անակնկալներու սպասել սովորած ենք ա՛լ: Աստուած գիտէ, բայց «նշանք ժամանակի» լուրջ են, և կարծես թէ կ'աւետեն մեզի լուրջ ու զուարթ օրեր ալ: Շատ մը բաներ իրարու միացած, կարծես ըսել կ'ուզեն մեզի. «Պինդ կալարուք զմէջս ձեր և լուցէք զլապտերս ձեր», բայց ինչ որ ալ պատահի՝ գիտենք թէ՛ եթէ մենք Աստուծոյ սիրելի որդիներն ենք, մեր գլուխէն և ոչ իսկ մտք մը պիտի կորսուի առանց անոր կամքին, գիտենք թէ իր իմաստութիւնը դժած է արդէն մեր ճամբան, գիտենք թէ իր զիրքին մէջ գրած է ամէն անոնց համար որոնք փորձութենէն կ'ազատին. «Մի երկնչիք, զի զնոց գնեցայք», և թէ «կացէք յիս»: և մենք գիտենք նաև թէ՛ որքան Աստուած բարիքներ խոստացած է. երանի՛ անոնց որոնք այդ վստահութիւնը ունին:

Սիրելի ճամբու ընկերներս, քաջասիրտ եղիք և հաստատակամ քալեցէք, նայեցէք հրեղէն սիւնին զոր Աստուած ձեզի իբր առաջնորդ դրած է: Այդ լոյսը պէտք է լուսաւորէ ձեր քայլերը, ու ատիկա Աստուծոյ Բանն է, ճամբան, այն նեղ շաւիղն է որ «Կենաց ի կենսա» կը տանի: Եւ որքան որ անոր մօտենանք՝ նոյնքան նուազ վախ պիտի ունենաք մտածամեծ գետերէն ու ծովերէն, որոնք ձեր ճամբուն վրայ պիտի պատահին: Տէրը պիտի ճեղքէ կարմիր ծովը՝ ձեր քայլերուն առջեւ, և ձեզ «ոչինչ վնասեցի»:

Սովը զմեզ դէպ ի Յորդանան պիտի

առաջնորդէ. Յորդանան՝ որմէ անդին Քանանու ընդարձակ ու բարեբեր դաշտերը կը տարածուին: Ա՛լ ճամբուն վերջը կը մօտի ու տակաւին քիչ մը մուծ է. մահուան հովիտն է այն ուրկէ կ'անցնինք, ու մեր աչքերը կը մթագնին, անկէ վերջ յաւիտենական լոյսը կը տեսնենք:

Յորդանանէն անդին երկնաւոր Քանանը կայ. երանի՛ թէ շուտ հասնէինք հոն, սիրելի եղբայրներ. վստելի ժամանակն ալ կարճ է արդէն: Ու մենէ ո՞րը քաջութիւն պիտի ունենայ օր մը ըսելու Առաքեալին հետ. «Զբարեք պատերազմն պատերազմացայ, զընթացան կատարեցի, զհաւատան պահեցի»... Երանի մանաւանդ անո՞ր, որ գիտէ ժամանակը տնտեսել, որ կը յիշէ միշտ թէ ժամանակը կարճ է, եւ իր գործն ըստ այնմ կը ձեւէ: Այդ մտածութիւնը փրկարար դուռը կը բանայ նոր տարուան հետ՝ նոր արքայութեան ալ օր մը, որուն համար մեր հոգիները կը ձգտին շարունակ կատարելութեան:

Քիի

Նմանողաբար
ՊՍԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ

ԿԱՂԱՆԴԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Էջ ԽԸ ՕՐ. ԱՍՏՂԻԿԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԷՆ

31 Դեկտեմբեր 1910

Վաղը նոր տարի մը եւս պիտի սկսի այս էջին հետեւ: Յուզուած կը գոցեմ հոս, վերջացող տարին, քանի մը շատ սիրուն բարեմաղթութիւններով: Նոր Տարի՛ մը...: Տարի մը եւս իմ տանն և ինն տարիներու վրայ որ վաղը քսան պիտի ըլլան...: Աստուած իմ, ո՞րքան շուտ կը սահի ժամանակը և ի՞նչպէս շուտ կը թօին իրեն հետ իմ երէկուան երազներս, իմ երիտասարդական երազներս:

Ինչպէ՛ս կը թաւալին կ'անցնին այս տարիները, և կը փափաքէի որ դարեր տեւէին, այն տարիները մանաւանդ՝ զոր վայելցի և որոնց յիշատակները այնչափ քաղցր են ինծի...: Ա՛հ, երիտասարդ

ըլլալ, այսօրուան պէս, երկար, երկար, տակաւին շատ երկար տարիներ...

Հասած աղջիկ մը, կ'ըսեն ինծի: Կ'ըմբռնեմ այս բառին բովանդակ լրջութիւնը: Ի՞նչ նշանակութիւն ունին տասն և ինն տարիները մարդկային կեանքի մէջ, և որքան քիչ են այս քանի մը ծաղկաւէտ գարունները որք կը ճռուողեն իմ փոքրիկ սրտիս մէջ:

Դեռ երէկ էր որ տասներեք տարու էի, երէկ էր որ տակաւին տասնը չորս, տասնը հինգ, տասնը վեց տարու էի, հակած դպրոցական գրասեղանիս վրայ, և ահա հեռու չէ՞ այն վայրկեանը ուր պիտի վերջացնեմ տասներինս: Եւ այս տարի, հատ մ'եւս, որ տակաւին չէ սկսած, իր կարգին տեղի պիտի տայ ուրիշ տարի մը, սրտիս մէջ, հոգիիս մէջ, մտքիս մէջ, օրացոյցին տասներկու ամիսներն ապրելէ առաջ: Այնքան շուտ կ'անցնին անոնք, որ կը զգամ թէ չեմ կրնար հետեւիլ անոնց անսանձ ընթացքին, ոչինչ կրնամ ընել այս գնացքին դէմ՝ եթէ ոչ գալ ապաստանիլ այս մտերիմ խորհրդակցիս գիրկը, որ իմ Յուշատետրս է, անոր վտանգելու համար սիրտս, մտածմունքներս և վիշտերս:

Տխուր եմ այսօր, և այնքան տխուր՝ որուն աւա՛ղ, չպիտի կրնամ վարժուիլ, թէեւ յաճախ կ'այցելէ ինծի այս տխուր թիւնը այն օրէն ի վեր երբ հաստատեցի տարիներուն թողած անդարմանելի աւերը գեղեցկութեանս վրայ:

31 Դեկտեմբեր... Տարի մը եւս գնաց... Մենք միայն կը հասկնանք թէ ի՞նչ ծանր լրջութիւն մը կը պարունակեն իրենց մէջ այս բառերը, թէ ի՞նչ վիշտով կը հնչէ մեր ամէնէն փափուկ ջիւղերուն մէջ փախչող տարիներուն մահազանգը: Գեղեցիկ եղած ըլլալ և ըսել իւրովի թէ այլ եւս չէ կարելի գեղեցիկ ըլլալ միեւնոյն հրապոյրով, թէ ասկէ վերջը գալիք օրերուն ամէն մէկ ժամերը, իմ մտերիմ հայելիս՝ ուր այնքան հաճոյքով սքանչացայ տասնը ինը մատղաշ տարիներու թարմ գեղեցկութիւնս, չպիտի մոռնայ ինծի յիշեցնել տալու ինչ որ դէմքս անդառնալիօրէն կորսնցուցած է:

Եւ արդարեւ, ո՞վ է այն աղջիկը որ ճանչցած ըլլալով աղուոր ըլլալուն երկնային ուրախութիւնը, որ գիտցած ըլլալով իր նայուածքին, իր հմայքոտ ժպիտին ամենահզօր prestigeով հաճելի ըլլալը, սանկ քիչ մը չզգար անձկութեան զգացում մը՝ երբ ամէն տարի այս թուականը կու գայ իր գեղեցկութենէն մաս մը առնելու տանելու, քիչ մը աւելի հաստատելու համար տարեցութեան դրոշմը:

31 Դեկտեմբեր... Եւ ոչ մէկ բան արգելք կրնայ ըլլալ որ տարի մը եւս չգայ չաւելնայ իմ տասնեւինն տարիներուս վրայ, որով միեւնոյն ժամանակ կը պակսի իմ աշխարհիկ կեանքէս տարի մ'ալ: Ի գուր կը ջանամ թօթուել ընկճող կշիռը այն ամէն մէկ նոր օրերուն որոնք կուգան դիզուիլ ուսերուս վրայ: Տարիքս յառաջաջացաւ: Արեգակը երթալով կը խոնարհի: Ինչ որ ընեմ պարապ բան է, վասն զի երբեք ինծի չպիտի վերադառնայ այլ եւս այն՝ որ յուշիկ մը թռաւ ինձմէ, այն՝ որուն համար զիս սիրեցին, այն՝ որով ես այնքան անոյշ, այնքան հպարտօրէն երջանիկ եղայ: Դժբախտ Աստուծոյ, երջանկութեանդ լաւագոյն մասէն այսպէս ամէն տարի մէկ մէկ քիչ կ'ոչնչանայ գեղեցկութեանդ հետ, որ այն ալ իր կարգին երթալով կը թառամի և կը կորսնցնէ իր կաթնաթոյր թարմութեան հրապոյրը, աւա՛ղ, աւա՛ղ...

Տխուր եմ:

Ի՞նչ աղուոր բան է գեղեցիկ ըլլալը: Եւ ի՞նչ կսկծեցուցիչ բան է հաստատել թէ՛ երէկ տակաւին այնքան հրապուրիչ էի: Աւելի լաւ չէ՞ր որ երբեք չդիտնայի այս երանութեան քաղցրութիւնը, քանի որ չպիտի կրնայի զայն յաւիտենապէս պահպանել:

Ներէ՛ ինձ, Աստուած իմ, ներէ՛ ինձ, եթէ Բու շնորհած տուրքերդ կ'անգիտանամ այս լուսանքներով և այս ապերախ տութիւնովս: Բայց այն աղջիկները որոնք երբեք գեղեցիկ չեն եղած, գոնէ չեն գիտեր յարձակող կիզիչ վիշտերու դառնութիւնը, մօտեցած պատրանքին սարսափը որ սիրտ կը վրդովէ: Եւ ահա այս պատ-

ճառաւ . կ'ուզեմ , տարւոյն ամբողջ ընթացքին մէջ վարդապոյն մտածութիւններով գրած սոյնքան էջերէ վերջ , հոս տարեկան համարատուութիւնս բնիկ , այս հանգիստւոր իրիկունը , այս թերթիկներուն մէջ որ կը խռովեն գեղեցկութեանս մնացորդները , տարէցութեան ճամբան բռնող աղջկան մը տագնապեցուցիչ դողով : Ո՛չ , ո՛չ , աւելի լաւ է մնանիլ նոր տարիին հետ , քան թէ ինծի հիացողներուն ցուցադրել գեղեցկութեանս անգութ աւերակներուն տխուր տեսարանը , դեռ որքան ալ հմայիչ ըլլան անոնք :

Պիտանի չարիք մը , անխուսափելի չարիք մը ըլլալուն համար աս , պէ՛տք է որ հանդուրժեմ առանց գանգատելու և առանց ցաւելու անոր մածան ճանկերուն աւերները :

Տխուր եմ . . . անմխիթարելիօրէն տըխուր :

Սակայն դեռ քսանհինգ տարու չկամ և գիտեմ թէ ինծի փափաքողներ ունիմ :

Բայց , աւա՛ղ , բոլոր ասոնք այլևս անցելոյն պիտի վերապահուին : Զառիթափը զիս կը քաշէ կը տանի այն գագաթէն անդին ուր տակաւին կը փորձեմ կառչիլ անգուսպ պչրասիրութեան մը ամբողջ ճիւղերովս :

Ոչ , չեմ ուզեր ծերանալ :

Ես կ'ուզեմ միտլ այն աղջիկը , այն շէնչող և զուարթ օրիորդը , որուն թարմութիւնը սիրելի է , շնորհքը հրապուրիչ , երիտասարդութիւնը՝ ամենակարող :

Ես կ'ուզեմ ունենալ յաւիտենական երիտասարդութիւնը , վասնզի գեղեցկութիւնն է այն , վասնզի երջանկութիւնն է այն : Ի՞նչ փոյթ աշխարհի հաճոյքները , երբ ես այլևս երիտասարդ չըլլամ զանոնք վայելելու և հասկնալու համար :

Երիտասարդութիւն . . . Բեզի համար են գարնան ամբողջ ծաղիկները , քեզի համար են սիրոյ ամէն գգուանքները , քեզմէ կը բղխին ամէն հաճոյքները : Պէտք է երիտասարդ ըլլալ :

Ո՛չ , չեմ ուզեր ծերանալ :

Կը վախնամ տարիներէն որոնք հետըզ-

հետէ կը դիզուին . կը վախնամ այն անգութ խորշումներէն որոնք պիտի ակօսացնեն մաքուր ճակատս և մագաղաթի պիտի դուրսնեն դէմքս . կը վախնամ մանաւանդ այն ստուերներէն որոնք կը խռովեն երազներս , հանդարտ աչքերուս փայլը , հպարտ՝ խրոխտ գոյնիս թարմութիւնը , տաք շրթունքներուս արիւնը :

Անցած կիրակի իրիկուն էր , հայրեկիս հետ գացինք Թէփէ-Պաշի թատրոնը ուր Յրանսական խումբը կը ներկայացնէր Լը Լիւ : Օր . Բառնի այնքան ճիշտ , այնքան գերմարդկային աւելնով մը պատկերացուց սրտաշարժ դերը տարիքը առնող աղջկան մը , որ կը պահանջէ կեանքէն և երջանկութենէն իր ունեցոյ՝ իրաւունքը , իր ամբողջ յուսահատութիւններուն , իր բոլոր անձկութիւններուն մէջ որ , պահ մը փորձուցայ մտածել թէ՛ արդեօք իմ սրբտիս վիճակին վրայ չափած ձեւած և իբրեւ նիւթ ընտրած էին այդ թատերագութիւնը հանրութեան առջև խաղալու համար : Շատ տխրեցայ , և հայրեկիս նշմարեց այս տխրաբեկ վիճակս . . .

Դեռ չեմ ընտրած և ոչ մէկը և կ'ուզեմ ընտրել սրտիս հետ միեւնոյն տենդով բաբախող սիրտը : Բայց նոյն իսկ եթէ յաւիտեան անգիտանամ այնքան երգուած սիրոյ սուրբ առաքինութիւնները , ինծի դարձեալ երիտասարդութիւնը հաճելի է , ամբողջ այն երիտասարդութիւնը որ կը խայտայ , կ'եռեւեփի , կը սարսփի իմ տառնընդ տարիներու կայտառ երակներու մէջ , եթէ նոյն իսկ բան մը չկրնամ ընել անով , միայն սիրտս թեթեւ և հոգիս հրճուանքի մէջ , ընութեան և աշխարհի հոգեթով հրճուանքներուն մէջտեղ ըլլալու ուրախութեան համար :

Դեռ չեմ ընտրած և ոչ մէկը , և կ'ուզեմ ընտրել զիս հասկցող սիրտը , սրտիս արձագանգը ընդունող սիրտը : Կը նախազգամ թէ պիտի գայ ինծի այդ Սէրր . . . : Պիտի հնչէ , գիտեմ , այն օրհնեալ ժամը , այն լուրջ և հանդիսաւոր ժամը ուր պիտի արեւոտի կեանքս , քանի որ հոն պիտի ունենամ կեանքիս գաղտնիքը գտնելու երջանկութիւնը : Եւ ի՞նչ որ ատենօք տար-

տամ և խորհրդաւոր համակրութիւն մըն էր սրտիս մէջ, այսօր անդիմադրելի բուռն զգացում մըն է հոն: Համակրութիւն... մարդկային լեզուին ամենէն գեղեցիկ բառը: Ես միշտ լսած եմ որ կ'ըսեն թէ Սէրը կեանքին գերագոյն ուրախութիւնն է. և միթէ Աստուած նոյն ինքն սէր չէ՞:

Տառապիլ միասին, զգալ, խնդալ և լալ միասին, երկու յօրինուածք բայց միայն մէկ ըմբռնողութիւն, մեղամաղձոտ մարգարէութիւն միատեղ ապրելու սահմանուած երկու թարմ սիրտերու. զգալ միեւնոյն ժամուն, միեւնոյն վայրկենին և միեւնոյն աստիճան փափաքի մը խայթոցը կամ գգուանքի մը ծարաւը, բարեբախտ զուգադիպութիւն մըն է որ կ'ոսկեզօծէ կեանքիս ամենէն գեղեցիկ ճառագայթները, ամենէն երջանիկ ժամերը:

Մարդկային երջանկութենէն ասկէ աւելին կարելի է պահանջել.

Աստուած իմ, ո՛րքան անսովոր արցունքներ, անհամբերութիւններ, ո՛րքան նոր նոր փափաքներ, որքան տարօրինակ ծրագիրներ, և յետոյ, առանց պատճառի ո՛րքան լալ, ո՛րքան մորթիկներ կուտական ջնջ սրտիս մէջ, որքան վիպասանութիւններ երեւակայութեան մէկ ժամուան մէջ ստեղծուած, սրտիս խռովքներուն համեմատ որք ո՛չ կ'ուղղուին ո՛չ ալ կարգ կանոն ունին:

Մթին և անհուն գաղտնիք մը՝ որուն ո՛չ անունը, ո՛չ ձեւը ոչ ալ սահմանը գիտեմ:

Հազիւ կրցի թափանցել ուրիշ սրտի մը հետ համաշափ բարախելու գաղտնիքը, սիրել բառին իմաստը, զոր վիպասաններուն և բանաստեղծներուն գրականութիւնը չարաչար կը գործածէ: Բանաստեղծներուն գրականութիւնը, վիպասաններուն իրապաշտութիւնը մինչեւ հիմա ինծի բնաբան մը չըսին այն տեսակ զգացումէ մը ստեղծուած ճշմարիտ հաճոյքին մասին, բուռն հաճոյքին, հմայքոտ քաղցր վիշտին. իրեւ ան անկեղծօրէն բաժնուած է սիրտդ հասկցող ուրիշ անկեղծ սրտի մը հետ:

31 Դեկտեմբեր... Ո՛չ, ո՛չ, չե՛մ ուզեր ծերանալ:

Տարիներով երազեցի սիրոյ ասետեաց երկիրը, նուաճեցի զայն քալ առ քալ պատանեկութեանս անմեղ երազներուն և երիտասարդութեանս վարդազոյն արշալոյսին մէջտեղ և հիմա. ո՛հ, ինչ անտանելի վիշտ մըն է ինծի պէս տկար և պղատոնական աղջկան մը համար զգալ սրտին մէջ հրաբուխ մը, համնիլ արքայութեան դրան առջեւ և այս գոց դրան մէջտեղէն ցանկալ հոգեպարար անոյշ բոյրեր... և ի վերջոյ զգալ սրտին մէջ մռնչող անբան մը, իրաւ որ Հաւատաքնութեան տանջանքներուն ամենէն սոսկալին է:

Իմ ներկայ մտածումներս զիս կը փոխադրեն անցած տարուան նոյն այս թուականին այս ժամուն որ կեանքիս այս օրագրին մէջ, ամէն նախորդ տարիներու պէս, նշանակուած է սրտիս մէջ ծլած սիրոյ այնքան ջերմագին, այնքան յաճախ կրկնուած բարեմաղթութիւններով. այն թուականէն ի վեր իմ մէջս գտայ ուրիշի մը սրտին թիք-թաքին հետ ներդաշնակօրէն բարախելու այս անհամբեր սիրտը, Անոր սրտին հետ որ պիտի պատրաստէ զիս զոյգ ընթանալու միեւնոյն կապերով միացած, միեւնոյն իտէալին մէջ ընկերացած իրեն հետ:

Հո՛ն է որ պիտի գտնեմ երջանիկ միսթարութիւն մը՝ որ այնքան ատեն խիստ եղաւ իմ ճակատագրիս:

Պիտի սիրեմ զինքը, պիտի սիրեմ կոյս սրտիս ամբողջ թափովը, ուր իր խորունկ, զգուալի և քաղցր նայուածքը դեռ անցած օր կը փայլէր ա՛յնքան բոցակէզ, այնքան լուսաշող որ արքայութեան հեշտարոյր ճառագայթի մը պէս կը թափանցէր սրտիս խորը, հոն լիաշուրթն խմել տալու ինծի խելացիկ գինովութիւնով մը երջանկութեան բաժակը, երկնային այն նեկտարը, աստուածային այն անպարտապիտ որ իր սիրեցեալ պաշտելի բիրերը կը կալկէին երակներուս մէջ. բայց մանաւանդ իր այն խորհրդաւոր հրաբորբոք ակնարկները որոնք, իրենց արձակած ճառագայթներուն մէջ իսկ կը կրեն այն տեսակ կրակ մը որ պիտի բաւէր ամբողջ մոլորակային դրութիւնը

բռնկցնելու, եւ այն ամէն սրտատրոփում-
ներն եւ բարախումները, որ երկու սիրտեր,
երկու կեանքեր իրարու կը քաշեն եւ որ
երբ զինքը տեսնեմ կամ խօսքը լսեմ կը
ծիրաներինն դէմքս: Ինչէն է:

Ինչէն է պատճառը: Ահաւոր է այս
հարցական նշանը: Զգողական այս անդա-
պելի զօրութիւնները որ ջիղերուս եւ ու-
ղեղիս ամէնէն վսեմ եւ ամէնէն մանուա-
ծապատ մեքենականութեան պտուղներն
են, ինչի՞ կը փոխուին, երբ երկու զգայուն
սիրտեր, որք ո՛չ խօսքով, ո՛չ գանգատով,
ո՛չ հաճոյքով, ո՛չ հառաչանքով, ոչ ալ տը-
ցունքով չեն կրնար բացատրել ինքզինք-
նին, ի՞նչի կը փոխուին: Զեմ գիտեր: Ա-
պագայ կենսաբանները եւ բնախօսները զայն
պիտի ըսեն: Իմ մասիս ես միայն գիտեմ
որ երկու հոգիներու հրեշտակային նուազն
է այս, որոնք իրարու հետ կը խօսին առանց
խօսքի...:

Սիրելի ծնողքս, պաշտելի ծնողքս իրաւ
է թէ իմ հաւանութեանս կը դիմեն գերա-
գոյն պարագային մէջ, եւ ինծի հրամայական
պարտականութիւն մըն է հպատակիլ անոնց
փափաքին, բայց երբ զիս կը ջանան հա-
մոզել եւ կը պնդեն որ ամուսնանամ իրենց
հեղինակութեան, նախապաշարումներուն,
փառասիրութեան կամ անձնական հաշիւ-
ներուն համար այնտեսակ մարդու մը հետ
զոր երբեք չեմ ճանչցած, զոր թերեւս
առաջին անգամ պիտի տեսնեմ եւ զիս կը
սակարկեն եւ կ'ուզեն ծախել պարզ ապ-
րանքի մը պէս, մարդու մը՝ որուն ո՛չ
բնաւորութիւնը ինծի ծանօթ է ոչ ալ նկա-
րագիրը, ահա այն ատեն իրենք իրենց
ձեռք իսկ կը ստորագրեն իրենց դատա-
պարտութիւնը, եւ իրենց անգութ խղճին
խայթերը պիտի չտրչրկեն զիրենք յաւէտ,
եթէ սիրտ մը կը կրեն: Երբ իրենք անշա-
հախնդիր են եւ երջանկութեանս փափա-
քող, ինչպէս կը հաւատամ եւ համոզուած
եմ խղճովին, երբ իրենք կը հաւատան
ինծի տրուած կրթութեանս եւ դատողու-
թեանս վրայ, պէտք է որ ինծի թողուն
ազատընտրութիւնը ամուսնոյ մը զոր ճանչ-
ցած եւ ուսումնասիրած ըլլամ, որուն պիտի
նուիրեմ երիտասարդութիւնս եւ կեանքս
ամբողջ:

Երկու հոգիներու զիրար ազատօրէն
ընտրելու խիղճը այն քայն է որուն վրայ
կը հանգչին ամուսնական երջանկութեան
ամենէն փառաւոր տաճարները, ըսած է,
չեմ յիշեր որ մեծ մարդուն մէկը:

Ո՛չ, ո՛չ, ամուսնութիւնը սէր է, եւ
պէտք է սէր միայ միայն:

Բաց ի փոխադարձ անկեղծ սէրէ, որ
երկու սիրտեր իրարու կը մօտեցնէ եւ որու
միջոցաւ, կ'երեւակայեմ, թէ ո՛ր աստիճանի
երջանկաւէտ է այս զգացումով միացած
ամուսնիներու կեանքը, ամէն ինչ ունայ-
նութիւն է, ամէն ինչ կեղծիք է, ստու-
թիւն է, մնապարծութիւն է: Անկէ դուրս
ամէն բան ոչինչ է:

Կեղծիք է, երեսնայու փափաքը, ցու-
ցամուլութիւնը, ստույթիւն եւ զւեհիկ է
զրամի համար եղած ամուսնութիւնը, ստու-
թիւն՝ երիտասարդութեան հպարտութիւնը,
ստույթիւն՝ կեանքին զաւրտիքն իսկ, եթէ
հոն չկայ զգացումի կայծը, այն աստուա-
ծային տուրքը որով կը վառի սրտին մէջ
Յոյսին բոցը, որով կը ցոլանայ մաքին մէջ
իտէալի մը վեհութիւնը:

Ես միշտ բողոքած եմ եւ պիտի բողո-
քեմ այն անպատկառ ինքնահաւանութեան
դէմ որով պրեկը եւ կիները կը միայնեն
առ յաւէտ իրենց ձեռքերը, ոչ միայն ա-
ռանց զիրար ճանչնալու, այլ նոյն իսկ ա-
ռանց գիտնալու թէ մարդկային խմորը
ինչէ՞ եղած է, առանց նոյնիսկ սորված ըլ-
լալու բնաւորութեանց Ա. Բ. Գ. ը, ա-
ռանց կարգացած ըլլալու հոգեւոյ գրքին
առաջին էջը: Յանցանքը, ըստ իս, ոչ մէ-
կուն է եւ ամէնունն է: Ոչ մէկունն է,
որովհետեւ կը ծնինք կեղծ հիմերով հիմ-
նուած ընկերութեան մը մէջ, վասն զի կը
խճողենք զայն հազար տեսակ անօգուտ
բաներով, վասն զի կը քողինք կեանքին
առողջ կրթութեան խաւար տգիտութեան
մէջ: Որքան բազմաթիւ են անոնք որ
Շէքսպիր, Լամարթին եւ Շիլլէր կարդացած
են, Պէթօֆէնի սեմֆօնիները կը զորնեն,
որ կը խօսին քանի մի լիզուներ եւ չեն
գիտեր թէ նկարագրիլ ինչ է, թէ ի՞նչ են
սնոր սկզբունքները, թէ ի՞նչ լծակներ
կրնան զայն ուղղել դէպի բարին, ազ-

նուազանել զայն, տալ անոր անկեղծութեան
դրոշմը:

Բայց, Աստուած իմ, որքան շեղեցայ
իմ նիւթէս և ո՛ւր տեղուանոր տարին
զիս այս իրիկուան խոկմունքներս: Միև-
նոյն Աստուծոյն է որ անած և ապրած պղա-
տոնականութեամբ և հովուերգութեամբ,
քշուած վիպական կեանքի փոթորիկներէն,
կը գրէ այսպէս: Դո՛ւ, ուրեմն, աղուոր
Նոր Տարի, դու որ հիմա պիտի գաս զար-
նելու մեր դուռը, լսէ՛ իմ երիտասարդա-
կան մաղթանքներս:

Սեւ թէ վարդագոյն ժամեր, վիշտեր
թէ հաճոյքներ, ցաւեր թէ ուրախութիւն-
ներ, ի՛նչ որ ալ բերես մեզի, ո՛վ բարի-
գալուստ Նոր Տարի, երկար տտեն միա-
ցիր մեր մէջ: Մի՛ աճապարեր տարինե-
րու ովկէսնոսին մէջ քու խօլ գնացքդ:
Ես քեզի հետ պիտի ապրիմ քու ընթա-
նալիք ամիսներդ:

Կը խնդրեմ քեզմէ իբրեւ շնորհք և
իբրեւ երախտիք որ միայն ուրախութիւն
և զգայուն, գորովայի ծաղկափթթում մը
բերես մեզի որ բողբոջի, ծաղկի սրտիս կա-
նանչագեղ հանդարտ պարտէզին մէջ:

Եւ Դու, Աստուած իմ, շնորհապարտ
պիտի ըլլամ Գեղի, երբ վերջապէս լսես
իմ աղաչանքներս ուր դրած եմ Դու
միայն գիտես թէ ինչ զգացումով, ինչ
եռանդով, կուսական ամենամաքուր սիրտս
ու հոգիս:

Երբ նմանօրինակ էջի մը վրայ կը
գրէի անցեալ տարի՝ «Յայտնէ՛ ինձ ան-
յապաղ, Տէր իմ, ա՛յն զոր պիտի բնորեմ»,
չէի համարձակեր հաւատալ թէ 1910 տա-
րին աստիճան մը եւս պիտի հաստատէր իմ
մէջս այս յոյսս, ա՛յնքան քաղցր այս եր-
ջանկութիւնը, զէպի ուր ես այնքան ան-
գամ, երկչոտ, երկարեցի իմ տենդոտ թե-
ւերս: Եւ քանի որ ամէն բանի կարող ես,
օգնէ՛ ինձ որ յառաջիկայ տարի քսանս ու-
րախ սրտով վերջացնեմ. հրամայէ՛ որ չոն
տիրէ մշտնջենական, ծաղկազուարճ գա-
րուն մը: Ս՛յս է այն ամէն երջանկութիւնը
որ կը մաղթեմ ես ինծի և ամբողջ ընտանի-
քիս այս վայրկենի իսկ երբ ամէն կողմէ
հազարաւոր բարեմաղթութիւններ կը բար-
ձրանան առ Գեղ:

Ընդօրինակեց՝
ՖԻՍԻ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՂ. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Մ Ա Շ Ը

Սուգը ընդհանուր եղաւ աշխարհի ա-
մէն կողմերն ուր Հայ մը կ'ապրի, ի լուր
վախճանման Ամենայն Հայոց ընդհանրական
Կաթողիկոսին, Ն. Ս. Օծութիւն Վեհ. Տ.
Մատթէոս Բ.ի: Առաքելաշնորհ Հայրա-
պետին առողջական վիճակին վրայ նպաս-
տաւոր տեղեկութիւններու հրատարակու-
մէն քանի մը օր վերջը, իր անակնկալ հի-
ւանդութեան տխուր լուրը, և գրեթէ ան-
միջապէս ետքը համող մահուան գոյժը
տրտում աղղեցութիւն մը գործեցին միտ-
քերու վրայ: Աղգային չըջանակի մէջ մեծ
եղաւ վնասութիւնը, որովհետեւ հոգեւոյս
Հայրապետին նման զօրեղ նկարագրի,
անձնուրաց և բացարձակապէս անշահա-
խնդիր ոգիի և բազմակողմանի բարձր
կարողութեան տէր անձեր, ճամարտապէս
մտքուր և անբիծ եկեղեցականներ հաղ-
ուադէպ կերպով ի յայտ կուգան ազգե-
րու մէջ: Իզմիրլեան իր չքնաղ յատկու-
թեանց փայլուն ապացոյցները տուած էր
Թրքահայոց մէջ, մօտ կէս դարէ ի վեր,
յորմէհետէ ընդգրկած էր եկեղեցականու-
թեան տապարէզը, սկսելով վարդապետու-
թեան օրէն մինչեւ իր առաջին և երկ-
րորդ Պատրիարքութեան շրջանները, և
ազգը իրաւամբ կը սպասէր անկէ՝ մեծա-
գոյն ծառայութիւններ, ընդհանրական կա-
թողիկոսութեան պաշտօնին մէջ, — ամենա-
բարձր դիրքը զոր Հայ ազգը կրնայ ընծա-
յել ամէնէն աւելի սիրած, պաշտած անձ-
նաւորութեան:

Բիրտ իրականութիւնը եկաւ ցրել մեր
ամէնուս յոյսերը: Ն. Ս. Օծութիւն մէ-
կուկէս տարուան կաթողիկոսական պաշ-
տօնավարութեան շրջանին մէջ — աւա՜ղ,
այնքան կարճատեւ — հազիւ միջոց ունեցած
էր՝ մարդիկն և իրերը ուսումնասիրելու,
միջավայրն և իր պահանջումները խորա-
պէս ճանչնալու և կշռելու, և ծրագրեր
մշակելու ազգային, եկեղեցական և վար-

չական հիմնական բարեկարգութիւններու, զորս ի գլուխ հանելու կարող գրէթէ միակ անձնաւորութիւնը կը հանդիսանար՝ իր վարչագիտութեամբ և անկաշկանդ նկարագրով:

Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոս ոչ ևս է, և կը վախճանէ թէ իր ծրագրած բոլոր բարենորոգումները, բարձի թողի ըլլան անսահման ժամանակի մը համար:

Ազանակահանները. — Էջմիածնէն Կաթողիկոսական տեղակալ Տ. Գէորգ Եպ. Սուրենեանի պաշտօնական հեռագրին վրայ, որ տխուր իրողութիւնը կը գուժէր Պատրիարքարանէն՝ ամէն կողմ հեռագրուեցաւ անդամանելի կորուստը: Ազանահէներ կատարուեցան գաւառի թէ արտասահմանի բոլոր քաղաքներուն և Պոլսոյ բոլոր եկեղեցիներուն մէջ, սկսելով Գումգափուի Մայր Եկեղեցիէն, ուր Դեկտ. 19ի կիրակի առտուն պատարագեց Գեր. Տ. Վահրամ Ս. Արքեպ. Մանկունի, և Ս. Պատրիարք Հայրը — որ իրեւ հրաժարեալ և սգաւոր չնստաւ իր աթոռը, այլ հպիսկոպոսական յատուկ աթոռ մը գրաւեց ձախակողման դասին մէջ, — նախագահելով հոգեհանգրստեան պաշտամունքին, զմայլելի դամբանականով մը գծեց հոգեւոյ Հայրապետին կեանքը, յուզուելով ինքը և յուզումի մատնելով ներկայ հոծ բազմութիւնը: Յիշենք թէ Ազգ. Պատրիարքարանէն ուղղուած հրաւիրագրերու վրայ, իր հոգեւոր պաշտամունքին ներկայ գտնուեցան օսմ. նախարարներ, բարձր պաշտօնատարներ և Բարձր Շէյխ-Իւլ-Իսլամ էֆ. ին կողմէ զրկուած պաշտօնատար մը, դեսպանատանց պատուիրակներ, ներկայացուցիչներ բոլոր հոգեւոր պետերուն կողմէ, ի բաց առեալ Հայ-հռոմէականաց Պատրիարքարանը (*):

(*) Ընդհ. Հայութեան վրայ շատ խուռ սպառնալիքն գործեց Թերզեան Ս.ի այս ընթացքը, և Հայերուն հերձուածող և ևերեսիկս կողմիւր Ն. Սրբազնութեան կողմէ, ինչպէս երկաթորակ գրեցին քերթերը: Ուշագրաւ է որ հրապարակագիր Երուանդ ԿՔ. Թուրքեան, Հայ-հռոմէականաց Պատրիարքարանին շեք պաշտպան քերթի մը ծօրեկին գաւաղը, ինք ևս Տէր և Տնօրէն Կաթողիկոս երգիծաբարբին, հրապարակաւ գրեց քերթիւ հայ անհաս մը չի հանդուրժէր հայ ժողովրդեան եղած այս բռնամտեցիկ, և իր տնունը կը ջնջէ: Հայ-հռոմէականաց օսմարեւ, և կը դառնայ ի գիրկ մայրենի Եկեղեցւոյ:

Ազգային Ժողովոց և Խորհրդոց անդամներ և հոծ բազմութիւն ժողովրդեան:

Ազգ. Ժողովը Դեկտ. 17ի ուրբաթ օրը, երեսօթխաններու ամենաստուար մեծամասնութեամբ գումարուեցաւ, նախագահութեամբ Տ. Հմայեակ Արքեպ. Դիմաքսեանի, և յոտնկայս լսեց Էջմիածնէն հասած հեռագիրը, զոր կարգաց Ատենադպիր Բրօֆ. Արքանամ էֆ. Տ. Յակոբեան, նաև Ս. Պատրիարք Հօր մէկ պաշտօնագիրը, որով իր խորագրած վիշտը կը յայտնէր Ն. Ս. Օծութեան մահուան առթիւ: Յետոյ Ատենապետ Մանուկ էֆ. Ազանեան կարգաց գրաւոր ատենաբանութիւն մը, և նախագահ Տ. Հմայեակ Սրբազան՝ յայտնաւէտ զգածուած՝ արտասանեց Հոգւոցը, ու պարագային յարմար մաղթանքներով վերջացուց խօսքերը: Եւ ատենանք փակուեցաւ անմիջապէս ի նշան սգոյ, առանց խօսք տրուելու Վարդգէս էֆ.ի, որ անբաւական համարելով կատարուած յարգանքի ցոյցը, պատշաճ կը դատէր որ Ազգ. Ժողովին երկու կուսակցութիւններէն մէյմէկ անձ պատշաճ բառերով Իզմիրեանի ի պատիւ խօսէին:

Ս. Հայրապետին տառապանքները. — Ն. Ս. Օծութեան մահուան գոյժին յառաջ բերած տխուր տպաւորութիւնն աւելի շեշտուեցաւ Տ. Գրիգորիս Ծ. Վ. Պալաքեանի՝ Սկիւտարի Յառաջդիմական Լսարանին կողմէ կազմակերպուած սգահանդէսին մէջ ըրած յայտնութիւններովը, Էջմիածնի միաբանութեան կողմէ նորնաւոր Հայրապետին ընծայուած աւելի քան ցուրտ ընդունելութեան և խուլ հակակրօնեան մասին: Միաբանութեան ճեմարանական և ոչ-ճեմարանական հակընդդէմ կուսակցութիւններն ալ, կը յայտարարէ Տ. Գրիգորիս Ծ. Վ., ամէն վայրկեան իր գլուխը կ'ուտէին. ա՛յնքան հալածեցին, նախատեսքին զինքը որ չկրնալով տոկալ սրտի այս բուռն յուզումներուն, մեռաւ Վեհափառը: Կը յիշէ կարգաթող Երուանդ Վ.ի անորակելի յանդգնութիւնը՝ Հայրապետին դէմ, այս վերջինին կրած յուզումները՝ զանազան առիթներով, և Ն. Ս. Օծութեան վհատութիւնը՝ կարգի կանոնի

բերելու, օրէնքի սահմանին մէջ դնելու միաբանութիւնը, որուն իւրաքանչիւր անդամը «մէյմէկ կաթողիկոսներ են»: Շահու, պաշտօնի ու բարձր դիրքի համեմու համար էնդերիկներն այնքան բուռն հանգամանք առած են եղեր, որ Վեհափառը՝ Օծումէն առաջ իսկ՝ հեռագիր մը պատրաստեր է, ուսերէնի թարգմանուելով զորկուելու Ձարին, «ընդունելու համար իր հրաժարականը՝ Հայրապետական Մայր Աթոռէն, քանի որ դեռ օծուած չէ»: Իր վստահութիւնը զրաւող մէկ քանի միաբաններ հազիւ կարող կ'ըլլան ամօքելու իր վշտակոծ սիրտը, և քաջալերելու որ հրաժարականէն ետ կենայ:

Ձեռք մանրամասներ Տ. Գրիգորիս Ծ. Վ. Պալագեանի ահաւոր յայտնութիւնները, որոնք հրատարակուեցան օրաթերթերու մէջ, և որոնք կը հաստատուին Կովկասահայ թերթերու — մասնաւորապէս Հորիզոնի — նորագոյն հրատարակութիւններով: Ու որքան ալ փափաքող ենք չափազանցուած նկատելու հոգելոյս Հայրապետին ենթարկուած դժնդակ տառապանքը, բոլորն բուն նշանակութեամբ ֆիզիքապէս հիւսնդ վիճակին մէջ, այսուհանդերձ՝ ամէնէն թեթեւացուցիչ պարագաներուն մէջ իսկ՝ բարոյական ամենամանր պատասխանատուութեան տակ կը գտնուի Ս. Էջմիածնի միաբանութիւնը՝ ընդհանուր Հայութեան առջև: Այդ պատասխանատուութեան աստիճանը, և պատասխանատուները պիտի ճշտուին անշուշտ Պատմութեան առջև: Լրագրական հրատարակութիւնք սաւ այժմ որոշ պատասխանատուութեան բաժին մը կը հանեն, միաբաններէն Ատրպատականի առաջնորդ Տ. Կարապետ Եպիսկոպի որ վերջին օրերուն Ն. Ս. Օծութեան հետ Թիֆլիզի առաջնորդութեան մասին ունեցած տեսակցութեան պահուն «կոպիտ» վարմունք մը ունեցեր է:

Հորիզոնի մէջ ծանօթ գրազէտ Լէօ «Իմ վերջին տեսակցութիւնը Իզմիրլեանի հետ» խորագրով յօդուածներու շարքի մը մէջ կը գրէ ի մէջ այլոց. «Էջմիածին մանուկ հէնց առաջին անգամից, առաջին վայրկիսին զգում է իրան մի անտանելի, ծանր, խեղ-

դող մթնոլորտի մէջ: Վանական հայերը լիփ-լիցուն են անձնական հաշիւների, տիրապետական տենչերի ֆիշացող օձերով: Եւ այդ մթնոլորտի մէջ Վեհաբանը մի անմատչելի կամ գոնէ լաւ պաշտպանուած դղեակ չէ, որին զարնուելով փշրուէին չարութեան, նախանձի, վանական եսամտութեան յախուռն, անսանձ յորձանքները: Ո՛չ, այդ մթնոլորտը լայն հոսանքներով թափուած է Վեհաբանի մէջ... Եւ երեւակայեցէք թէ ի՞նչ կը լինի Իզմիրլեանի պէս մի մաքուր, ազնիւ, անհասկեր մարդու դրութիւնը: Մի ամբողջ ողբերգութիւն...»:

Թաղուեր. — Դեկտ. 19ին կատարուեցաւ հոգելոյս Հայրապետին օծման և թաղման արարողութիւնը, որուն ի դիմաց Թրքահայոց՝ ներկայացուցիչ նշանակուած էին Տ. Մեսրոպ Եպ. Տ. Մովսէսեան, և Պ. Համբարձում Առաքելեան: Հանդէսը կատարուած է մեծ շքով, և ներկայացուցիչ ունէին Կովկասի փոխարքայ Վորոնցով Տաշքով իշխանը, ղինուորական և քաղաքային իշխանութիւնները, Վրաց Եկզարքը, Վրացի ադմուրալտութիւնը, Կովկասի զանազան քաղաքները, իմամները, ազգային ընկերութիւնները, մամուլը ևն, ևն:

Օտար մամուլը. — Օտար շրջանակներու վրայ ևս խոր տպաւորութիւն գործեց Իզմիրլեան Հայրիկին մահը: Եւրոպական թերթեր, ի զուէս որոց՝ Թայմզ, ներքողայից գնահատականներով գծեցին հանգուցեալ երջանկայիշատակ Կաթողիկոսին կեանքը: Թուրք մամուլը, մասնաւորապէս, հայրենակցական ազնիւ զգացումով մի մասնակցեցաւ հայ ժողովրդեան ենթարկուած անդարմանելի վիշտին: Ի մէջ այլոց թուրք ազատական գրազէտ Մահմետ Սաադգ պէյ, որ Երուսաղէմի մէջ ծանօթացած էր մեծ Աքսորականին, Սապանի մէջ ուշադրաւ յօդուած մը նուիրեց հոգելոյս հայրապետին, որուն կեանքին ցայտուն գիծերը ի վեր հանելէ, և բարձր նկարագիրը ներբողելէ ետքը կ'աւելցնէ. «Իզմիրլեան Սրբազան աշխարհի վրայ ու է փառասիրութեան և քրճանքի չնուիրեց իր

մտքի կորուզը: Բնաւ չհեռացաւ իր խղճի ձայնին անսալէ և րարոյականութենէ. իր կեանքին առաջնորդն եղաւ միշտ Ուղղութիւնը, և զայն ունեցաւ շարունակ կէտ նպատակի: Հակառակ աշխարհային բոլոր վիշտերուն ու ցաւերուն, կրած նեղութիւններուն ու տառապանքներուն, ամէն երջանկութենէ վեր նկատեց հոգիի մաքրութիւնը: Մեծ անճաւարութիւն մը կը կորսնցնէ մարդկութիւնը... Հաղուադիւտ է մարդ մը որ Իզմիրլեանին չափ իր բոլոր գործերուն մէջ, իր բոլոր ընթացքին մէջ Տիեզերքին ու Ազգին հանգէպ իր բոլոր գործառնութեանց մէջ այնքան տիրապետել գիտցած ըլլայ իր անձին, ու մաքուր պահած ըլլայ հոգին, ոտնակոխ ընելով ամէն բնական ու աշխարհային ըզմանք»:

ԿԻՂԻԿԻՈՅ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՍՐՏԱՌՈՒԾ ԿՈՉԻՆ. — Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին մօտը, վերջին կաթիլն եղաւ դառնութեան բաժակին՝ Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին համար, որ անցեալ շաբթու Մամուլ միջոցաւ յուզիչ աղերս մը ուղղած է առ ազգն, որով կը յիշեցնէ խուլցած ականջներու և կուրցած աչքերու՝ թէ «ազգը պէտք ունէր հացի, դպրոցի և եկեղեցիի, այսօր չորրորդ մը և մեծագոյնն աւելցաւ. ազգը պէտք ունի և ԳԼԽՈՒ. անգլուխ ժողովուրդները կեանքի աշխարհին մէջ տեղ և դեր չունին... Պոլիս խառնակ, Երուսաղէմ թափուր, էջմիածին սուգի մէջ, Կիլիկիան անհաց, անլոյս և հոգեւորապէս զրեթէ անմխիթար, և ընդհանուր ազգն անգլուխ և անհովիւ: Ո՞վ պիտի շահի այս խառնակ, անպաշտպան և աւաղելի վիճակէն. — Զինուորները որոնք պղտոր ջուր կը փնտռեն, և զայլերը որոնք ձիւնոտ և բքաբեր օրերու կը սպասեն»: Ուստի կ'աղերսէ, յանուն մեր պաշտելի նուիրականութեանց, «տեղի տալ լեզուի և գրչի զկծիչ կռիւներուն, ուրանալ անհատական եւերնիս այն մեծ եսին առջեւ որ ընդհանուր ազգինն է, զոնկ թուիք կամ սկզբունք ի նպաստ խաղաղութեան»: Այս սրտառուչ աղերսը զոր կ'ընէ իբրեւ վերջին կտակ, — քանի որ «մահը

չատ մօտ է» նաև անոր, — և կը ստորագրէ «Հր. Սահակ Կաթողիկոս Կիլիկիոյ», պիտի լսուի՞ արդեօք ազգին ընդհանրութեան կողմէ, պիտի լռեն կիրքերը, պիտի դադրին յամառութիւնները, ի սէր տառապեալ Հայութեան: Աւաղ, յոյս չունինք:

ՀԱՅ ԵՒ ՅՈՅՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ. — Հոգեւոյս Հայրապետին հոգեհանգստեան առթիւ փոխանակուած այցելութեանց միջոցին Յունաց Տ. Եօաքիմ Պատրիարքը, Պատր. Փոխանորդ Տ. Ղեւոնդ Ծ. Վ. Դուբեանի յայտարարած է թէ փոխադարձաբար յայտնուած եղբայրական յարգանքները՝ առթիւներ են երկու Եկեղեցեաց մէջ աւելի սերտ և մտերմական յարաբերութիւններ մշակելու, և մանաւանդ գործակցելու երբ կառավարութեան պիտի բացատրուին եկեղեցական և կրթական իրաւունքներու վերաբերեալ խնդիրներ, որոնք որքան նոյնանան այնքան լաւ կ'րմբռնուին կառավարութենէն և նկատառութիւնը կը դիւրանայ: Փոխանորդ Հայրը պատասխանեց յարգալից խօսքերով, զգացնելով հանդերձ թէ պաշտօն չունի խօսելու յանուն Պատրիարքի կամ ժողովոյ: Նշանակելի է այս առթիւ յոյն թերթերու յայտնած փափաքը՝ երկու Եկեղեցիներու միջեւ մերձեցում մը յառաջ բերելու: Բրոսոսի մէջ հայագէտ Տ. Եօաքիմ Արօսդուլիտիս սարկաւազ, Յունաց Պատրիարքարանի քարտուղարներէն, հետեւեալ շահեկան սուղերը կը գրէ այս առթիւ. —

«Ազգ մը, (ակնարկելով Հայոց) որ Քրիստոսի կրօնքին համար այնքան նահատակներ տուած է. և Կոստանդինուպէն 11 տարի առաջ Քրիստոնէութիւնը իր կառավարութեան պաշտօնական կրօնքն ըրած է, անշուշտ իրաւասութիւն ունի իր կարծիքն ու քուէն ունենալու կրօնական խնդիրներու մէջ: Ազգ մը, որ այսքան տարի Բիւզանդիոնի ճակատագրին մասնակցելով, մեր նախնիքներու հետ միասին, խաչի դրօշին տակ կռուած է Տիգրիսի և Եփրատի ափերուն վրայ, թէ՛ խաղաղութեան և թէ պատերազմի ատեն Բիւզանդական կայսրութեան պարծանքն եղած և Բիւզանդական բանակներ յաղթութեան ասպարէզի

Ա. Մ. Ա. Ն. ՈՐԻ

Ե Ի

Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
Տօնին առթիւ«Ցանաթ» ջերմ բարեմայթուծիւններով
և շնորհաւորէ իր ընթերցողները:

վրայ առաջնորդող այնքան մարդեր հաս-
ցուցած է, արժանի է մեր եղբայրական
համակրանքին: Եթէ հին ատեն մեր միջեւ
դէպքեր պատահած են, անոնք արդիւնքն
էին այն պայմաններուն որոնց հետ կապ-
ւելին երկու ազգերը: Սակայն մեր նախ-
նիքներն երբէք Հայերը չբառապարտեցին
կամ չարամարհեցին իրրեւ հերձուածող:
Ընդհակառակն անոնք Հայերուն հետ վար-
ուեցան միշտ գորովով և փափկութեամբ,
ինչպէս մեծ քոյր մը կը վարուի իր չփա-
ցած փոքրիկ քրոջը հետ: Ըսածներուս ա-
պացոյցն ալ սա է թէ բաղմոթիւ անգամ-
ներ ձեռնարկներ եղած են Հայ և Յոյն
եկեղեցիները միացնելու: Այսօր այնքան
իրական են Հայ և Յոյն Պատրիարքներու
յարաքերութիւնները, որ կարելի չէ զա-
նոնք բաղդաակ Յունաց Պատրիարքա-
րանին միւս անկախ Օրթոտոքս եկե-
ղեցիներուն յարաքերութիւններուն հետ»:

Շնորհակալութիւններ ունինք յարգելի
ստրկաւաղին համակրալից տողերուն հա-
մար: Բայց փափաքուած միացումն յատուց
բերելու համար անհրաժեշտ է շատ լրջօրէն
խորհիլ, քանի որ ուրիշ կարգի նկատում-
ներէ զատ, Օրթոտոքս եկեղեցւոյ հետ դա-
ւանական միացում մը կրնայ ծանր հետեւ-
ւանքներ ունենալ մասնաւորապէս մեր
կողմէն հայ եղբայրներու ազգային ինք-
նուրոյն գոյութեան հարցին վրայ ալ, ինչպէս
կը դիտէր անցեալ օր Հօրոյ՝ Ժամանակին
մէջ: Միւս կողմէ անժամանակ կը գտնենք
այսպիսի խնդրոյ մը վրայ խորհիլ իսկ, երբ
ամենէն մեծ հեղինակութիւնը Հայոց մէջ ի
կրօնականին, Հայոց Ընդհանրական Հայ-
րապետութեան Աթոռը, Թափուր է և
սուգի մէջ:

ԱԶԳԻՆ ՕՐՈՒԷԱՆ ՎԻՃԱԿԸ կը մնայ
միեւնոյն անստուգութեան մէջ ուր էր ամիս
մը առաջ: Ընդդիմադիր «ազատականք»
կը պնդեն իրենց բողոքին վրայ, և Ազ-
գային Ժողովոյ վերջին երկու նիստերուն
խմբովին բացակայեցան, անգործութեան
մասնելով ազգային իշխանութեան միակ
ներկայացուցիչը հանդիսացող վերին Ժողովը
ալ: Ս. Պատրիարքը կը պնդէ միշտ ազա-
տականաց բողոքին արդարացիութեան վրայ՝
ընդգէտ նոր Վարչութեան ընտրութեան, և
ի մասին երեսփոխաններու չէին վիճակաւ
գաղարման ստիպողականութիւն: Ազգային
Ժողովին վերջին երկու նիստերն ալ անցան
ատենական գործողութիւններով, որովհետեւ
71ի մեծամասնութիւնը չգոյացաւ: Այսու
հանդերձ ներկայ երեսփոխանք զրեթէ միա-
ձայնութեամբ մերժեցին Ազատականաց և
Ս. Պատրիարք հօր ստարկութիւնները:

Վերջին նիստին 70 երեսփոխան ներկայ
էին, և միայն մէկ երեսփոխանի բացակա-
յութիւնը պատճառ եղաւ որ անիշխանու-
թիւնը շարունակուի գոնէ տասնհինգ օր
ևս: Վարչական Ժողովոյ ընտրութիւնը
տակաւին չհաղորդուեցաւ Բ. Դրան ի վա-
ւերացումն, և կ'ըսուի թէ Ս. Պատրիարքն
իր հրաժարականը մատուցած է կառավա-
րութեան:

Արտասահմանի հայ լուրջ թերթեր կը
դատապարտեն «ազատականաց» նորօրինակ
գործելակերպը, որուն նմանը չէ տեսնուած
ո և է սահմանադրական երկրի մէջ, և որ
շատ գէշ նախընթաց մը յառաջ պիտի բերէ
ապագային համար, առիթ և ղիւրութիւն
տալով ո և է փոքրամասնութեան՝ (ազա-
տական, պահպանողական կամ նոյն իսկ
յետադիմական) իրենց խօսքը քալեցնելու,
ճշելով ազգին ներկայացուցիչներուն մե-
ծամասնութեան կամքին վրայ, և ջլատելով
ազգային գործերու բարեօք ընթացքը:

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՀԱՄԱՅՆԱԿ ԴՆՆԵ. ԷԲԱԿԻՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐԲԱՅՐ ԴՆՆԵ. ԿԷԶԻՐԻՆԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
Զաւակներու. Յակոբեան խան

“ՏԱՃԱՐ”-Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրուց
Արտասահմանի համար տարեկան	10 ֆրանք
Ռուսիա	4 ռուպլի
Ամերիկա	2 օլար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆՆԻՆ՝ ԴԻԴՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Բահանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պեփթաւ, Հայոց եկեղեցի

در سعادت به شکفا شده ارمی کلیسا سنده (داجار) فزتمی مدیری پاپاس زارمار

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՈՍՏԱՆ, հռամսեայ մեծ պարբերագիր, Արուեստներու, գրականութեանց և գիտութեանց, Հիմնադիր խմբագիրներ՝ Միքայէլ Շամտանճեան և Տիգրան Չէօկիւրեան: Մօտ 250 էջերէ բաղկացեալ ստուար հատոր մը, ուր ամբողջութեամբ կ'երևան Մօքասանի Պուշքը Սիւիփը, և Կ. Հաուք-թմանի Արեւածագին Առաջը՝ ընկերային տուամ հինգ արարուած, պատմուածքներ թղթոյէն. ուսումնասիրութիւններ քերթուածներ ևն, ծանօթ սիրուած գրողներէ: «Ոստանի իւրաքանչիւր թիւը պիտի ըլլայ Հայերուս և ընդհանուր ազգերու երեք ամսուան յառաջդիմութիւններուն պատմութիւնը»: Կը յանձնարարուի ամէն գրասէրներու, որ հիւթեղ և լուրջ ընթերցումներու սիրահար են: Իւրաքանչիւր թիւը կ'արժէ 12 զրշ.: Տարեկան 4 թիւի բաժնեգին 40 զրշ.: Գաւառ 45 զրշ.: Արտասահման 12 ֆր.:

Ա.Զ.Գ., շաբաթաթերթ ազգային, գրական և քաղաքական, ուշագրաւ Ամերիկահայ թերթերուն մէջ՝ իր լուրջ պարունակութեամբ: Բաժնեգին՝ տարեկան 12 ֆր.: Հասցէ՝ The AZK, Pub. Co., 16 Beach St., BOSTON Mass. (U. S. A.):

ԳԱՄԵՐ, փոքրիկ նամբորդը Արեւելքի մեջ.—Սիւմն էֆ. Գաբամանճեանի այս գործը տեղագրութիւն մը չէ միայն Հայաստանի և Կիլիկիոյ, այլ ազգային դէպքերով, հին և նոր յիշատակներով լեցուն հատոր մըն է:

Գին 10 զրշ.: Փոստի ծախք 2 զրշ.: Կը ծախուի բոլոր գրավաճառներու քով:

ԲԱԶՄԱՎԷՊ, ամսագիր ազգային, քանասիրական, գրական, գիտական պատկերազարդ: Տարեկան բաժնեգին 10 ֆր.: Հրատարակուեցաւ Դեկտ. թիւը: Հասցէ՝ Rédaction de la Revue «BAZMAVEP» St. Lazar, VENISE (Italie):

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ, քառյական, ուսումնական, արհեստագիտական: Հրատարակուեցաւ Յունվարի թիւը: Տարեկան բաժնեգին 15 ֆր.: Հասցէ՝ Rédaction de la revue «Handess Amsorya»: Vienne VII/2, Mechitaristengasse, 4.:

ԱՍՏՂ ԲԵԹԼԵՀԷՄԻ, ամսաթերթ հոգեւոր արարչագիտական: Տարեկան բաժնեգին 12 զրշ.: արտասահման 4 ֆր.: Հասցէ՝ Մանուկ Յ. Գօչունեան, Կ. Պոլիս, Մեծ նոր խան, վերնայարկ թիւ 45:

ԱՅԻՆԷԻ ԷՕՄԻՐ ԴԵՇԷՐ.—Գրաբարէն հայատառ թուրքերէնի թարգմանեց Ազեքսանդր էֆ. Գըյընեան: Բարոյալից և հետաքրքրաշարժ հատոր մը: գին 5 զրշ.:

ՃԷՆՆԷԹԻՆ ԱՆԱՔԹԱՐԸ, խրատական ժողովրդական հատորիկ մը, Հայերէն և Հայատառ թուրքերէն, արձակ և ոտանաւոր: Գրեց Վահան Քհ. Ժամկոչեան:

«ԱՄԵՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ»

Թեոդիկի գրական, տեղեկագրական ևն. ճոխ հաւաքածոն, որ սպառելու մօտ է, կը ծախուի ի գին 12 զրշ.:

